



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻՆ

ԸՆԿԵ՛. ԽՆԴԻՐՆԵՐ	Քաղաքականութիւն եւ իւր աղէտներն	Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ
ԿՐԹԱԿԱՆ	Այլ անց դաստիարակութիւնը	ԱՍԹԻՆԷ
ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ	Բրնտանական Մայրաքաղաքն	Պ. Տ.
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ	Իմ վեճակը (Միխայիլով)	ԶՕԿ
ՎԷՊ	Կառափնաբեմի վրայ ամուսնութիւն	(ԱԼԷՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱ)
ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲ. ԼՐՈՅ	Արտաքին, Ներքին, Ազգային	
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ	(Կղա՛լիէ տը Մոնթէքէն) Թարգմ.	Մ. ԶՕՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ	տարեկան	Կէս ոսկի Օսման .
»	վեցամսեայ	Քառ » »
Քաւառներ	տարեկան	Կէս » »
Օտար քաղաքներ	»	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք »		15 դան. արծամ
Մէկ թերթին ԳիՆՆ Է		60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ իւր եւ Է գրուած իւր կամ նամակ պէտք է ուղղել առ



Խմբագրութիւն Արեւելք և Մասիս լրագրաց
Վալաթիա, Նոյնառուկեան Խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 2 Օգոստոս

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

3 աճիս Լանտարայի վրայ պանքայի	144
3 » » » (վճակնին)	140 5/8
3 » Բարիի » (պանքայի)	22 75
3 » » » (վճակնին)	22 82 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Բանայիտե

	Դաճեկան
Երեկ երեկոյ գող. (Երաց. D. Սէ. ի)	17 38
Պարային գողութիւն վերջը	18 4
Բերայի մէջ	—
Առաւօտուն բացուեցաւ	18 4
Բարձրագոյն գին	18 4
Նաւազագոյն »	18 4
Կէս օրին	18 4
Փոխառութիւն 1858)	
» 1862) A. Սէ. ի. Կ. Ա. Ս. 33 —	
» 1860)	
» 1863) B. » Ի. Կ. » 48 5	
» 1872)	
» 1865)	
» 1869) C. » Գ. Ի. Կ. 48 2	
» 1873)	

Իւնիֆիւ Եգիպտական

Երեկ իրիկուն գողութեան	72 30
Այս առաւօտ բացուեցաւ Գ. Կ.	72 33 1/2
Կէս օրին	72 32 1/2

ԲԱԺՆԵՏՈՒԹՅՈՒՆ

Սօսիւթէ Ժէնէրալ..... Գ. Կ. Անգլ. Լ. Բ.	3 22
Քրէտի Ժէնէրալ..... » » Օսմ. »	6 30
Պանք տը Գանա..... » » » »	5 30
Սօս. Շտնի Ե վայելոր..... » » » »	3 28
Թրամաւէ..... » » » »	295
Բաւալիի երկաթուղի..... Ֆ. Բ.	41 75
Օպիկտսիտն տը Բրիտիթէ..... »	—
Բաւալիի երկաթուղի..... »	60

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի..... զըշ.	100
Օ Ֆրանքոնց..... »	87 38
Անգլիական ոսկի..... »	140 24
Բօլ Խմբէրիալ..... »	90 16
Քրիմից..... »	54 20
Ռուսկի թղթադրամ..... »	9 46
» արծաթ..... »	89 20
Ֆիօրին..... »	8 38
Մէք. արծ. (տարբ.)..... »	107 38

Վեցնոց ..	» ... 102 30
Հինգնոց ..	» ... 102 25
Մէթայիք ..	» ... 99
Պղինձ ..	» ... —
Թղթադրամ ..	» ... —

ԵՐԲՈՎԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լ. Երան, 13 Օգոստոս, Ժամ 3 վայր. 45 երեկոյ	
Անգլ. քօնայիտե	99 28 5/2
Օսմ. » Սէրի Գ. Բացուեցաւ	16 5 1/6
» » » Գողութեան	16 3 1/8
» » » Ա.	33
» » » Բ.	18 1 1/2
» » » Գ.	16 3 1/8
Օթօման 1874	69 1 1/4
Փոխառութիւն 1877.....	82
Պանք Օթօման	14
Ռուսական փոխառ. 1873.....	92 3 1/4
Եգիպտական միացեալ (Իւնիֆիւ)	65 3 1/8
» առանձն. (Բրիտիլիթի)	87 3 1/8
Տարա Սանիէ	62 3 1/3
Տօմանիալ (փոխառ. Բաշիլտ)	84 1 1/2
Հաւաքարական պարտաթուղթ 400.....	—
Փոխանակութիւն Բարիի վրայ	—
Վ. Երան, 13 Օգոստոս, Ժամ 4 երեկոյ	
Փոխանակութիւն Լ. Երանի վրայ	125 50
Օսմանեան երկաթուղի	20
Բարիլ, 13 Օգոստոս, Ժամ 3 վայր. 45 երեկոյ	
Յրանալիս Սանիթ 4 1 1/2 0/0.....	108 87 1 1/2
» » 3 0/0.....	80 75
Օսմանեան քօնայիտե Սէրի Գ. Բացուեցաւ	16 50
» » » Գողութեան	16 47 1 1/2
» » » Սէրի Բ.	17 75
» » » Գ.	16 40
Օսմանեան երկաթուղի	41 25
» Իւնիֆի Բաւալիի երկաթուղի.....	—
Պանք Օթօման	529 37 1 1/2
Գրէտի Լ. Երան	535
» Խոնսիէ	1315
Բաւալիի Լ. Երան	1240
Սուէզի ջրանցք	2 01 25
Ռուսական 5 0/0 1877ի	97 1 1/2
Իտալական Սանիթ	94 47 1 1/2
Եգիպտական միացեալ	329 37 1 1/2
Սպանիական (արապի).....	57 1 1/2
Բրիտիլիթի Իտալիա	390
5 0/0 Հաւաքարական	323 75
Զէք Լանտարայի վրայ	25 20

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34 ԴՆ ՏԱՐԻ

1885 ՕԴՈՍՏՈՍ 3

ԹԻԻ 3781

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻՆ

ՄԱՍԻՍ, իշր շաբաթաթերթ աւարտելով առաջին շրջանը, կը թեւակոխէ այս թուով յերկրորդն: Անցեալ շրջանին մէջ Մասիս, գլխաւորապէս իբր բանասիրական հանդէս մը, ջանաց հաճ լի լինիլ իւր ընթրցողաց: Այն ընդունելութիւն զոր գլխաւորապէս, ապացոյց մ'է թէ խմբագրութիւնը իւր նպատակին հասած է: Ներկայ շրջանին մէջ խմբագրութեան պարտականութիւնն է հայթայթել Մասիսի ընթերցողաց գոհունակութեան նորանոր առիթներ: Արդ պարտականութիւնն ի գործ դնելու պիտի աշխատինք:

ԿՈՅԱՆԴՆՈ ՎՈՒԽՅ, ՇԵԲԱԹ 3 ՕԳՈՍՏՈՍ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐ ԱՂԵՏՆԵՐՆ

Ա.

Քաղաքակրթութեան նկատմամբ ամէն ոք յարգանք կը խօսի, ամէն շրթունքներ օրհնենքներ կը կառնեն, ամէն գրիչներ գովեստներ կը գրեն, ծերն թէ պատանին, երիտասարդն թէ երիտասարդուն, ուսեալն թէ անուսը ջատագովելով կը ջատագովեն, ամէն կողմէն կը լուրի կեցցէ՝ քաղաքակրթութիւն, կեցցէն 1907 դարու քաղաքակրթութեան հեղինակ լուսոյ դաւակներ եւ ի մի բան խոշորացոյցով կը քննեն նորա օգուտներն եւ բարիքները. սակայն սա միտալի կարծիք եւ հրապուրիչ կողմն է. կը խնդրեմ պահ մ'ալ միւս կողմը դարձնել, պահ մ'ալ իբր անաչառ դատաւոր խնդիրն իւր ամէն տեսակէտներով դատել եւ վերջապէս պահ մ'ալ սորա յղացած եւ յառաջ բերած աղէտներն քննել որք աննշմարելի կը մնան ընդհանրապէս եւ գոնէ յաջ բաղմաց, իսկ զգացողներէ բիշեր կը բողբեն հրապարակաւ: Շատեր կը բաւականան խօսիլ, ճանաչել վիտաներն եւ միանգամայն հպատակիլ այս քաղաքակրթական հասանքին, բայց այս հոսանքը սրնթաց կ'ընթանայ եւ զմեզ իւր հետ կը տանի դէպ ի ծով եւ ովկիանոս քաղաքակրթութեան, ուր դեռ լողալու անվարժ լինելով պիտի խեղդուինք, պիտի վիճանանք: Այո՛, մարդկային ազգն որ այսչափ դարերէ հետէ բարբարոսական ամենամեծ հարուածներու

արիւնն ու շտ պատերազմաց դէմ միշտ մեր-
ցեցաւ եւ սակայն ապրեցաւ պահելով իւր
առողջութիւնն, սերունդն եւ զնքն ղե-
կավարդ կրօնն, բայց սյսօրենսյքս զաքաղըր-
թութիւնը կը խլէ մեզէն ամէնն եւ արմա-
տապէս եւ կ'առաջնորդէ զմեզ ի հ'ւժում,
ի փճացում եւ ի գերեզման: Այո՛, մահ կ'ըս-
պառնայ մեզ այս հոսանքի ընթացքն, որոյ
դէմ կ'ուզամ բարձրաճոյն բողոքել. գիտեմ
չատեր, նա մանաւանդ սյս դարուս լուսոյ
եւ քաղաքակրթութեան զաւակներն կարելի
է խաւարի զուակ եւ քաղաքակրթութեան
թշնամի անուանեն զիս. սակայն փոխ չ'է
սա ինձ համար. ես քաղաքակրթութեան
արդիւնքներն եւ հրաշքներն չ'եմ ուրանար,
սակայն չ'եմ ալ կրնար իւր բարեաց հետ իւր
աղէտներն ալ ընդգրկել, ազլտներ որք մեզ
մահ կ'ապառնան. եւ արդեօք սխալած
պիտի լինիմ եթէ ըսեմ թէ Կաթողիկոսութիւնն
անողորմ է հոգեւորական եւ առողջութեան, այ-
սինքն թէ մարդիկ որչափ քաղաքակրթուին,
պիտի կորսնցունեն իրենց առողջութիւնն,
որչափ քաղաքակրթութիւնն յառաջդիմէ այն-
չափ հիւանդութիւններ պիտի բազմանան
եւ ընդհանրանան, եւ վերջապէս որչափ
քաղաքակրթութիւնն ծաղկի, մարդիկ այնչափ
վատառողջ եւ կարճ պիտի ապրին. ճշմար-
տութիւններ որք ամէն օր իրենց զոհերով
կ'ապացուցուին եւ մենք դեռ չենք ուզիր մեր
ընթացից յոռի կէտերը քննել սրբազրել:
Ո՛չ որ կրնայ ուրանալ թէ ներկայիս այս-
չափ բազմաթիւ հիւանդութիւններ անծա-
նօթ էին մեր նախնեաց, թէ նոքա մեզմէ
աւելի առողջ եւ երկար կ'ապրէին. բայց
ինչո՞ւ հեռուններն կ'երթանք. բաւ է քննել
մեր գաւառացի եղբարք վիճակն զորս մենք
կէս քաղաքակրթութիւնուան ենք. միշտ ա-
ռողջ եւ հաստանդամ, ո՛չ բժիշկ ունին եւ
ո՛չ ալ նոցա պէտքն կ'զգան մեզ նման. հա-
զար եւ մէկ խնամքներ չ'են տանիր իրենց
մարմինն միջնորդութիւն փոփոխութեանց
ազդեցութեան դէմ պահպանելու, տապն
ու ցուրտն, հոլմն ու քամին, անձրեւն ու
ձիւնն չ'են վնասեր նոցա, զի վարժ են նոցա
հետ ի մանկութենէ. իսկ մենք քաղաքա-
կրթութիւն անուանելով կրկնակի զգեստնե-
րով կը ծածկուինք նոցա արտաքին ազդեցու-
թեանց դէմ, այնչափ զերծ կը պահենք զմեզ
որ օր մը եթէ այս խնամոց դէմ գործենք,

անմիջապէս կը վնասուինք եւ կը հիւանդա-
նանք: Մարմնոյ ամէն մասերը ծածկեցինք.
կարգն երեսին եկած է. կարելի է քիչ օրէն
ըստ քաղաքակրթական օրինաց զայն եւս
դոցենք... Բայց սյս գրելովս չ'եմ ուզեր
ըսել թէ բոկոտն եւ կիսամերկ շրջինք. ո՛չ,
կրկին վայելուչ կրնանք հագուել բայց դոնէ
փոքրութենէ վարժենք մեր գաւառները քիչ
եւ թեթեւ հագնելու եւ այնչափ չի պահենք
միջնորդութիւն ազդեցութենէն. այլ պէս մեծա-
ւով հարբուխ, խոչատապ, շնչափողատապ,
ցնցղատապ, թորատապ եւ ասոնց նման
հիւանդութիւններ աւելի նուազ պիտի պա-
տահն, աւելի չարքաւ պիտի գտնուինք եւ
պիտի կրնանք դիմադրել նոցա ազդեցու-
թեանց եւ ուրիշ կերպով մ'ըսելով պիտի ըն-
տանենանք բնութեան հետ:

Առողջապահ կ'ըսէ «Ուր օդ եւ լոյս
կը մտնէ, անդ բժիշկն չի մտնիր». բայց միւս
կողմէն մենք, քաղաքակրթեալ անձեր, կարե-
ւի եղածին չափ նուազ կը բանալք մեր բը-
նականաց պատուհաններն ու փեղկերն
որպէս զի լոյսը մեր կամ կարասեաց ա-
ռողջ գոյներու չ'վնասէ. բայց հոգ չ'է որ
ապականեալ օդն մեր գոյները բուրմոլին
եղծած է քաղաքակրթութիւնը կը ներէ սորա
համար: Պատուհաններու գոց պահուելուն
մի հզօր պատճառ ալ կայ այն է հոգեւոր-
կարծեմ շատ անգամ չի գիտնալով իսկ
բուն նշանակութիւնն, ամենատեղէն բայց
քաղաքակրթութեան օրն 10 անգամ կը կրկնէ
այս բառն եւ իբր մի երկնային պատգամ
փաստ բռնելով ինքզինքն շատ պարագայից
մէջ կը գրկէ զով եւ մաքուր օդի կենսատու
ազդեցութենէն. երանի՛ մեր գաւառացի
եղբարք որք ոչ գիտեն սորա նշանակութիւնն
եւ ոչ ալ երթակայ են նորա վնասուց, թէ-
պէտ միշտ երթակայ նորա ազդեցութեանց:
Քաղաքակրթութեան փափուկ անձեր գիշերնե-
րը մեծ խնամով պարտին պատուհաններն
դոցել, վարագոյրները քաշել եւ երբեմն
ալ սպասաւորներ հսկելու են թէ մի դուցէ
բացուին եւ օդն ազդէ, որովհետեւ զուտ
օդն քաղաքակրթութեան մարդուն թշնամին է,
իսկ մեր կէս քաղաքակրթ անուանած գա-
ւառացի եղբարք միշտ բարեկամն է. այլ
ընդհակառակն ապականեալ օդն է նորա
թշնամին, նա կը խեղդուի այդ պարագա-
յից մէջ: Վայ քեզ, ո՛վ Տաղաւարեան, որ

միշտ պատուհաններն բաց կը ննջես եւ ազատ օդ կը շնչես հակառակ քաղաքակրթական փափկացուցիչ օրինաց . . . Վա՛յ քեզ, կ'ըսէ քաղաքակրթ աշխարհն որ կակուղ բամբակեայ անկողիներն, աղուամետուր բարձերն եւ անկողնոց ամէն կարգի քաղաքակրթական փափկութիւններն արհամարհելով կարծրներն նախապատիւ կը համարիս եւ զայդ կը բարոյեցն ըսելով թէ՝ աւելի առողջարար է, թէ առաւօտներն աւելի առոյգ եւ կայտառ կը զարթնու ամէն անձ այդ եղանակաւ, մուսցած իւր յոգնութիւններն, իսկ հակառակ պարագայից մէջ, թոյլ, մեղի, աւելի յոգնած քան հանգչած: Քեզ համար կը բերես շատ ու շատ փաստեր մանաւանդ պատանեաց եւ երիտասարդաց համար, բայց քաղաքակրթութիւնը դորա հակառակն կը պահանջէ:

Քաղաքակրթութիւնն երբեմն բնութեան ալ հակառակ կը պահանջէ, որպէս գիշերն ցերեկի, ցերեկն գիշերի վերածել, այսինքն երբ բնութեան ճրագն կը հեռանայ, լուսութիւն կ'սկսի տիրել եւ աշխարհի բոլոր կենդանիներ եւ բոյսեր նորա օրինակին հետեւելով կը հանգչին, որպէս նաեւ կէս քաղաքակրթ անուանեալ մարդիկ, քաղաքակրթներն կը սարգելին, արհեստական եւ աչաց առողջութեան վնասող լոյսերով ժամեր կ'անցընեն խճսելու կամ աշխատելու, եւ երբեմն՝ նա մանաւանդ աւելի քաղաքակրթներն՝ մինչ ցարձայս: Եւ այն ատեն միայն հանգչիլ կ'երազեն, երբ բնութիւնը կը զարթնու. իրենք քնանալ կ'ըսկըն, արչալոյսի եւ առաւօտեան ոյն զով եւ աշխատութեան յարմար ժամերն թըմբութեամբ կ'անցնեն եւ ցերեկուան շոգ եւ աշխատելու անյարմար ժամերու միայն դործի սկսիլ կ'երազեն. բայց քանի որ քաղաքակրթութիւնը կը պահանջէ, այսպիսի յեղաշրջումներ ներելի են:

Առողջաբաններն միշտ կ'ըսեն շատակերութիւնը վնասակար է, եւ ընդհանրապէս սակաւակեացներն եւ եւ նուազ մը սակերներն երկար եւ առողջ ապրած են եւ կ'ապրին. բայց հոգ չէ. քաղաքակրթութիւնը շատակերութիւն կը պահանջէ. երբ ստամոքսն յոգնի, գոգոտելու է զայն ազդի ազդի դեղերով եւ համեմներով:

Քաղաքակրթելոց ստամոքսներ ամեն կարգի ուտեստներ չեն ընդունիր, չատերն նոցա կը վնասեն. մեծ զղուշութեամբ եւ խոհեմութեամբ վարուելու է այդ պարոն ստամոքսներու հետ, երբ քաղաքակրթելոց կը վերաբերին: Բայց արդեօք իրա՞ն է թէ մեր դաւառացի եղբարց կերածն է թեփախառն հաց, սոխ, սխտոր, լըւրիւ, բակլայ, ցաւար եւ. բայց ասո՞նք չեն վնասեր նոցա. ոչ, ազնիւ քաղաքակրթ, նոցա կերածն միայն ազոնք են եւ եթէ քարիսկ ուտեն կ'մարսեն եւ եթէ քաղաքակրթեալ վստառող մը սեղմեն՝ ջուրը կը հանեն. նա չի խմեր քեզ նման արհեստական դեղօրէիւք եւ թոյներով պատրաստուած ըմպելիներ. առատ զով ու վճիտ ջուր, կարագն եւս՝ թան եւ եթէ այդի ունի անարատ գինի, աւասիկ իւր ըմպելիներն, եւ ասոնցմով աւելի առողջ է նա քան դէղօրէիւք պատրաստեալ ըմպելիներով:

Քաղաքակրթութիւն մարդոց մարմնոյ բնական կազմն ալ տգնտ չի թողուր, կը կաշկանդ է կը կապլպէ. նախ պէտք է փոքր ոտքեր ունենալ որոյ համար մասնաւորներ եւ նա մանաւանդ օրիորդներ երբեմն այնչափ փոքր կոշիկներ կը հագնին որ կը կաշկանդէ քաղաքակրթութիւնն կը ներէ բաւ է որ ոտքն փոքր տեսնուի: Մարմինն նուրբ տեսնուելու է մանաւանդ իգական սեռերուն. այս խեղճերն բարբարոսական դարերէն աւելի գերի արական սեռին, նոցա կամաց համապատասխանելու համար, իրենց մէջքն ու լանջքն քաշէ անուանեալ ձուլարաններու մէջ կը դնեն, այնչափ նեղ որ խեղճերու շնչառեւտրութեան, արեան շրջագայութեան եւ մարսողական պաշտօնավարութիւններն կ'արգելուին եւ կը վտանգուին շատ ատեն: Ձեմ՝ ուղեր սորա աղետալից հետեւանքներն, մանաւանդ իգական սեռի մանաւոր պարագայից մէջ տեղի ունեցածներն պարզել, դի այս կաշկանդմանց ենթարկեալներու աւելի ծանօթ է. . . բայց գոնէ կազմն աւելի հրապուրիչ ձեւ մը կ'առնու, բնաւ երբէք եթէ իւրմերկութեան մէջ քննենք. բայց աչքի նախապաշարման վարդապետութիւնն է որ դմեղ կը խտրէ: Այս տողերով չեմ ուզեր քոռսէի դործածութիւնը միշտ վնասակար համարել. ո՛չ, քաշէ քեզիւնը պաշտպանողներէն եմ որ

առանց կաղնի փոխելու օրոք թելի ձեւ մը կուտայ եւ ժամանակը պարագայից համար տողջարար խել է . բայց երբէք եւ երբէք ներքի չեն անգլխական քօսակներն :

Բայց քաղաքակրթութիւնն աւելի խոտապահանջ է . կ'ուզէ նաեւ որ կորսնցները մեր առողջութեան կնիք բնական կ'որոշուի թիւնն , ունենանք եւ նա մանաւանդ իդական սեռն մեռելաբանի սպիտակ ալեր , որոյ համար առողջութիւնն խանգարող դէղորէից դիմելու է , որդէս զարի (arsenic) քաղաքի եւ այսպիսով առած բնական սպիտակութիւնն սրբազրեւու է ազգի ազգի աիւրներով . ապա մի արհեստական կարմրութիւն տալու համար արհեստական ներկերու կը դիմեն : Այսպիսի դէպքեր ըստ քաղաքակրթեայ աչքերու շատ օրոք թելի են , սակայն 50 էն 40 էն անդին երեսներն նայելու չէ , զի կանոն կը թառամին . այսպէսով թէ բնական դեղեցկութիւն կը կորսնցներն եւ թէ արհեստականն ունենալու համար առողջութեան կը վնասեն եւ կը տգեղեցուցեն , բայց հոգ չէ , քաղաքակրթութիւնն շատ ջուրեր կը վերցնէ :

Փափկութիւն , աւասիկ կրկին քաղաքակրթութեան պահանջներէն մին , եւ նա մանաւանդ իդական սեռին . համար եթէ ներքի ինձ պիտի ըսեմ թէ փափկութիւնն հիւանդութիւն մ'է եւ կամ աւելի ճիշդ խօսելու համար փափկութիւնն ամեն կարգի հիւանդութեան ենթակայութեան վիճակ մ'է . այո՛ , փափկներն են որոց ամենափոքրիկ ցուրտն կամ տաքն , շատ մը ուտեստներ , թեթեւ մարգանք մը , փոքր յոգնութիւն մը , մի քանի ժամու աշխատութիւն կը վնասեն , կը հիւանդացնեն . եթէ համատարած հիւանդութիւն մը սկսի առաջին անգամ այս փափկներն կ'ենթարկուին , եւ ի մի բան ամէն հոգի կը շարժին , տարին 12 ամիս դեղեր , թոյներ կ'ուտեն , որոց մին ախորժակ կը բանայ , միւսն ոյժ կուտայ , երրորդն ջրային գորութեան համար է , ուրիշ մը արեան տկարութեան եւ . այսպէսով նոցա ստամոքսներ դեղարաններու վերածուած են . բայց բաւական է որ փափկ են ըստ քաղաքակրթական օրինաց : Բժիշկներու աչքը լոյս . այս քաղաքակրթութիւն ամէնէ աւելի նոցա նպաստաւոր է . անշուշտ այս տողերն

կարդալով այնչափ չի պիտի օրոք յիշեն մանաւանդ եթէ խօստովանիմ թէ հաւատք չունիմ իրենց դեղորէից վրայ եւ արդէն կենացս մէջ գրեթէ զայն ճաշակած չեմ . բայց չեմ ըսեր թէ չպիտի ճաշակեմ . ոչ , քաւ լից , եթէ անհրաժեշտ պէտքն ըլլաւ , կը դիմեմ . մինչեւ հիմա չգիտեմ բարեաղբութիւն մ'է , զոր կարելի է կէս քաղաքակրթ ըլլալու կը պարտիմ :

Առողջապահներն միշտ կը կրկնեն թէ փափկութիւնն հիւանդութեանց մօտն է . այո՛ , աշխու ընժերցող . քանի որ փափկութիւնն տիրէ այնչափ հիւանդներն կը շատանան , վատառողջութիւն կ'ընդ հանրանայ եւ հիւանդութիւններ ծնունդ կ'առնուն . արդէն ո՛չ որ կրնայ ուրանալ , թէ այս ամէն հիւանդութիւններ անծանօթ էին մեր նախնեաց , անծանօթ են դեռ կէս քաղաքակրթ անուանեալ ժողովրդոց , անծանօթ են նա մանաւանդ վայրենիներուն համար . բայց կը խնդրեմ , ըսել չեմ ուզեր թէ մենք եւս լեւներն քաշուինք , վայրենի լինինք , ո՛չ , կրնանք կարծեմ ներկայիս քաղաքակրթութիւնը սրբազրեւով մեր զաւակներն եւ ինքզինքնիս քիչ մը չարքաշ , տոկուն մեծցնել ամէն բանի . այն խեղճեր խմորներ են մեր ձեռաց մէջ , մենք մեղապարտ ենք զայնս եւս մեր ընթացքին հետեւեցնելով՝ վատառողջ ընկնուս համար : Արդէն խեղճեր ժառանգականութեամբ կը վայելեն մեզմէ փափկութիւն , վերջն աշխատինք եթէ ո՛չ զայս սրբազրեւու , դոնէ փափկութիւնն աւելի չը մշակելու համար :

Նիժէ կ'ուզեն փափկութեան մեծամեծ վնասուց մասին համոզում մը դոյացնել , աւ մի քանի վայրենիներ , կէս վայրենիներ եւ կէս քաղաքակրթներ , զայնս պալատային փափուկ կենաց մը մէջ գիր . առաջիններ այնչափ պիտի հիւանդանան եւ տկարանան որ քիչ ժամանակէն պիտի մեռնին , երկրորդներն քիչ մ'աւելի պիտի ապրին , երրորդներն վատառողջ կենանք մը պիտի անցնեն եւ երկար չի պիտի կրնան ապրիլ . ինչո՞ւ , որովհետեւ խեղճերն բնութեան հակառակ փափկութեանց ենթարկեցինք , եւ կամ հիւանդութեանց ուղիւստան մէջ ձգեցինք . նոյն փորձերն եղած են կաթիլներու եւ ուրիշ կենդանեաց համար եւ միշտ մի եւ նոյն երակացութիւն ստացուած է :

Ընթերցողներէն շատեր անշուշտ ունին ձիեր, կովեր, ոչխարներ. ես կենդանաբաններու վրայ յենլով կ'ըսեմ թէ սորա բընական վայրենի վիճակին մէջ զրեթէ երբէք հիւանդութեան ինչ ըլլալը չը դիտեն, կը վազեն, կը քրտնին, կը պաղին, ջուր կը խմեն, անձրեւին, ձիւնին, ցուրտին եւ տափին տակն բացօթեայ կ'անցնեն առանց երբէք վնասուելու. բայց երբ զայն մենք դորձած ենք, ակոռներու, գոմերու մէջ կը փակենք, ձմեռ ատեններ զուրա չենք հաներ, քրտնեղուն պէս վրան լսթերով կը ծածկենք եւ հազար մէկ տեսակ խնամքներ կը տանինք եւ եւ. խեղճերն կրկին մերթ ընդ մերթ կը հիւանդանան, բայց ասիկա խիտ քիչ կը պատահի մեր երկիրներուն մէջ, որովհետեւ մենք կէս քաղաքակրթեալ եւ նոյն իսկ երբեմն վայրենի վիճակին մէջ կը պահենք զայն, բայց յ'Եւրոպա ուր երբեմն մարդոց չափ քաղաքակրթեալ վիճակի մը կ'ենթարկեն, նա մանաւանդ Անգլիա, Պեճիգա, Ֆրանսա եւ Ալմանիա, այն ատեն այս կենդանիներ մարդոց չափ հիւանդութեանց կ'ենթարկուին. այո՛, հոն ամեն զիւղեր կենդանեաց բժիշկներ կան որպէս մարդոց: Խեղճ կենդանիներն մեր շահուն համար հիւանդ վիճակաց կ'ենթարկենք:

Այլ խնդրեմ ներեցէք որ փոքրիկ մանրամասնութեան մը մէջ մոռնեմ որ բաւական համալիչ է: Որդեծնութեան, ինչպէս ներկայիս մեր կիներ, կարծեմ իրենց սեռի վայրենիներն ալ ենթակայ են. նկարագրութիւններ մեզ կը սովորեցնեն թէ նոցա համար ծննդաբերութեան ցաւն անծանօթ է. ոչ դայեակ ունին եւ ոչ ինչ. շատ անգամ քայլած ատեննին իրենց զաւակ կը ծնի. բայց ինչո՞ւ հեռուներն կ'երթանք, ասիկա նոյն իսկ մեր գաւառացի կիներու ասկէց 25 տարիներ առաջ բոլորովին անծանօթ էր. այսօր քաղաքակրթութեանն համար քիչ մը պէտքն կ'ըզան, բայց իրենց դայեակներն բաւ ու շատ են եւ շատ անգամ ալ պէտքն չեն զգար. աւելի մօտեանաք, ներկայիս քաղաքակրթ կիներու մայրեր եւ մօտեր եւս մասնագէտ մանկաբարձից պէտքն չ'էին զգար. 50 տարիներ առաջ զրեթէ չկար եւ դժուար որդեծնութիւններ չ'էին լուեր. բայց այս վերջին կէս

տարուան մեր քաղաքակրթութիւնն այնչափ հեռացուց զմեզ բնական վիճակէն եւ փափկացուց, որ որդեծնութիւնը, մանաւանդ փափուկ կանանց համար, խիտ դժուարաւ տեղի կ'ունենայ. հարկն մասնագէտ մանկաբարձներ ստեղծեց աւելի քաղաքակրթներու որպէս փափուկ փարիզեան ֆրանսուհիներու համար առանց մանկաբարձի քիչ ծնունդներ տեղի կ'ունենան: Ինչ որ ըսի մարդոց համար, նոյնն կը կրկնեմ կենդանեաց համար. այո՛, այն կենդանիներն որք քալած ատեննին կը ծնին բնական վիճակի մէջ եւ շատ դիւրութիւններով նոյն իսկ մեր երկիրներու մէջ, եւրոպական փափուկ վիճակին մէջ շատ ու շատ դժուարութիւններ կը պատահին, եւ նշանաւոր ազարակաց մէջ առ այս մասնագէտներ կը գտնուին:

Իոյսերն ալ այս օրինաց կը հնազանդին. այո՛, որչափ որ բոյս մը երկրի մը մէջ շատ մշակուի, այնչափ նոցա թշնամիներ կ'ուշերան, եւ արդարեւ վայրի վիճակի մէջ բոյսեր իրենց իբր թշնամի մակարոյծ բոյսեր եւ կենդանիներ քիչ ունին. մեր երկիրներու մէջ ուր քիչ մը խնամք կայ, այս թշնամեաց թիւն քիչ մ'աւելի է բայց անզգալաբար. եթէ երթանք եւ քննենք եւրոպիոյ մէջ մեր մշակած բոյսերն որք հազար եւ մէկ խնամքներով եւ մեծ տարածութեանց վրայ կը մշակուին, այն ատեն մեզ պիտի ներկայանան նոցա թշնամի բազմութիւ կենդանիներ եւ բոյսեր որոց միջեւ համար նոր միջոցներու և նոր բուսային բժիշկներու պէտքն կ'զգացուի:

Ե՛հ ուրեմն, կարծեմ այլ եւս կասկած չը մնար քաղաքակրթութիւնն առողջութեան անուղղակի համեմատական համարելուն. այս օրէնք ո՛չ միայն մարդոց այլ ամէն կենդանեաց եւ բուսոց համար ընդհանուր է. տեսանք ներկայիս քաղաքակրթութեան հոսանքին առողջութեան նկատմամբ հասուցած ազդեաներն. եթէ առաջն չ'առնենք, եթէ վիճակնիս չի սրբագրենք, վնասնիս մեծ եւ ամենամեծ է. չ'եմ ըսեր թէ ատենք քաղաքակրթութիւնը. նա շատ բարիքներ ունի. ո՛չ, կրնանք քաղաքակրթ ըլլալ եւ միանգամայն առողջ, չի հեռանալով բնութեան օրէնքներէն եւ սահմաններէն. հակառակ պարագային մէջ առողջութիւնն

երթալով պիտի նուազի, հիւանդութիւններ տւելնան եւ ընդհանրապէս, կենաց երկարութիւնը կարճի. այս ամէնը կարծեմ արդար իրաւամբ քաղաքակրթութեան աղէտներ կրնանք համարել:

Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ

ԿՐԹԱԿԱՆ

ԱՂԶԳԱՆՅ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻԻՆԸ

Այս յոռաջողութեան դարուս մէջ, ուր ամեն ինչ կը քայլէ, (ոչ թէ շոգիով, այն արդէն հինցած գիւտ մ'է), ուր խաւարը տեղի կուտայ լոյսին, ուր մարդկային հանձնարը հրաշալիք կը գործէ, ուր մտաց դարգացումն անհրաժեշտ պիտոյր մը դարձած է ամեն կարգի ընկերութեանց համար, այս դարուս մէջ վերջապէս ուր յոյժ մեծ ընկերական խնդրներ լուծուած կամ լուծուելու վրայ են, շատ բաներ խօսուած, շատ բաներ գրուած, շատ բաներ ի լոյս ընծայուած են կնոջ նկատմամբ:

Ամեն լուսաւորեալ ազգաց մէջ, կինն սկսած է նկատուիլ գրեթէ այդ մարդուն հաւասար, եւ այս ոչ իբրեւ շնորհ մը, քանզի վաղուց այդ տիար արարածը պարտէր աղաղակ բառնալ ընդդէմ իւր բռնաւորաց եւ պահանջել այդ իրաւունքն, եթէ տգիտութիւն եւ նախապաշարմունք ահադին անդունդներ չը փորէին իւր բնօրէն տից ներքեւ:

Կնոջ ազատութեան խնդիրը կը յուզէ ամեն սրտեր, եւ ամեն կանայի հոգի կը թրթռայ այդ քաղցրահնչիւն բառը լսելով: Այլ կինն ազատ ըլլալու համար պէտք է կատարեալ դաստիարակութիւն ստացած ըլլայ: Կնոջ դաստիարակութիւնը մարդկային ընկերութեան համար ամենամեծ բարիք մ'է, այլ դաստիարակութիւն ըսելով պէտք չէ իմանալ այն կիսատ կրթութիւնն որ կը տրուի մեր աղջկանց ազգային եւ օտար վարժարանաց մէջ, մինչեւ աստիճան մ'ընդօրինակելով մանչ տղոց տրուած դաստիարակութեան մեթոտը, որ փոքր ինչ անյարմար է մատաղ աղջկանց: Կնոջ կրթութիւնն կատարեալ ըլլալու համար, նախ եւ առաջ պէտք է ձկտել զինքը մայր մը կազմելու,

ճշմարիտ մայր մ'արժանի այդ անուան:

Անտարակոյս կին մ'ուսեալ ըլլալու է, բայց այս նկատմամբ գործածուած միջոցը զլսաւոր պակասութիւնն մ'ունին, այն է ըստ կարելոյն յիշողութիւնը մշակել, եւ սիրտն, երեւակայութիւնը չարթնցնել, չարծարծել այն նորակազմ փափուկ հոգւոյն մէջ բանաստեղծական վեհ զգացմունք:

Դժբաղդարար մեր ազգին մէջ աղջիկները սնապարծութեամբ ու միամտութեամբ կը մեծցեն. այս վերջինն իսկոյն կ'անհրեւութանայ եւ միմիայն առաջինը մնալով չար խորհրդատու մը կը դառնայ, որոյ ազդեցութիւնը մ'չտ սիրով լսելի այլ միայն անցաւոր դոհուեակութիւն մը կրնան հայթայթել եւ ոչ թէ երջանկութեւն: Հին ատեն այսպէս չէր, աղջիկները խոնարհութեան մէջ մեծնալով, բուրգ մանել եւ տան կառավարութիւն գիտէին, ու թագուհիներն իսկ արծաթափայլ վռտիլին պողպատեւ ալեաց մէջ լուսացը կ'ընէին: Անցան այն ատենները, եւ արդի կինն շատ հեռի է իւր նախնեաց օրինակին հետեւիլ փափաքելէ: Ուսում եւ տնտեսագիտութիւն երկու մահացու թշնամիք դարձած են, եւ կարի դժուարին է զանոնք հաշտեցնել:

Յիշեմ կնոջ դաստիարակութիւնը ճշմարտութեամբ եւ ուղղութեամբ եղած չէ, երբ փոխանակ կանոնաւոր կրթութեան թերի ուսում մը տրուած է նմա, որով կարող է լոկ սրահի մը մէջ փայլիլ նրբամաստ խօսքերով իւր խելքն ի հանգէս ածելով, շատ անգամ այդ կինն, որոյ սրտին մէջ չեն կարողացած արմատ ձգել դեղեցիկ զգացմունք, ստացած չ'ըլլալով ի մատաղ տիոց ճաշակն բարւոյն եւ գեղեցիկն, որոյ հոգին մարած է սնապարծութեամբ, եւ որ աշխարհի աշաց առջեւ ուսեալ է, շատ անգամ ոտնակոխ կ'ընէ իւր մայրական ու ամուսնական պարտիք, կը թողու օտարաց իւր տան կառավարութիւնն ու զաւակաց կրթութիւնն, կը զոհէ ամեն ինչ հաճոյից եւ կը մղէ իւր այրն դէսլ ի կործանում: Այլ լուրջ մտաց առջեւ այդ կինն՝ իւր երկտասարդութիւնն մաշեցնելով որդւոցը օրապահիկը հայթայթող աշխատասէր ամենատգէտ կնոջ մը մէկ արտասուաց կաթիլը չ'արժեր:

Նախ պէտք է դիտնալ թէ կինն որպէս

այրն սահմանուած չըլլալով ընտանեաց ապրուստը ճարելու եւ մտաւոր կամ մարմնաւոր աշխատութեամբ ստակ չահելու՝ իւր ամենէն նուիրական սլարտքն է կառավարել գիտնալ ինչ որ իւր ամուսինն իւր ճակտին քրտամբք ձեռք բերած ու իւր տրամադրութեան ներքեւ դրած է։ Եւ այդպէս իւր ամուսինը եւ անտեսադիտութիւնն, աւելի պատահաւոր ուսմանք են կնոջ համար քան գիւղիստութիւնն, լեզուադիտութիւնն, եւ։

Այլ սակայն մտաց լուսաւորութիւնն կարիօգտակար կրնայ ըլլալ նմա, եւ լաւ տնտեսագիտուն հիմար պէտք չէ զլանալ կնոջ, այն ամենափափուկ եւ ամենահզօր արարածին, ինչ որ իւր ուշիմ մինքն եւ զգայուն հոգին իրաւունք ունին պահանջելու, սյսինքն մտաւոր կարողութեանց զարգացումն։

Միթէ ուսումը կ'արդիւնէ՞ կնոջ մը տան պիտոյը հոգստու, միթէ երեւելի բերթողներու հետ անհունութեան ծոցը սաւառնող եւ անտի երկնային ճշմարիտ գեղեցկութիւնը որոնող հոգի մը չէ՞ կարող իւր սթափան միջոցին մի քանի վայրկեան անցընել խոհանոցին մէջ, միթէ ամօթ է փրդոսկրէ դաշնակին վրայ Պէթովէնի խոհերդները սքանչելապէս նուազող փափկիկ մատերու ճերմակեղէն կարկտել։ Ո՛չ, հարկւր անգամ ոչ։ Այլ ո՞վ կարող է մոծանել աս դաղափարը նորատի հայ աղջկանց մոքին մէջ, որք կը կարծեն թէ գեղանի եւ պատելի ըլլալու համար միայն ծնած են։ Ո՞վ կարող է կազմել ի նոյանէ լաւ տնտեսագիտուն հիմար պարծանք իրենց տան, եւ ուսեալ կանայք՝ պարծանք ազգին ու ընկերութեան։ Դուք միայն, ո՞ մայրեր, դուք միայն կարող էք ընել զայս, ձեր արդու-զարդից, հաճոյից եւ շաղակրատութեանց զոհած թանկագին ժամանակէն մի քիչ գողնալով ու նուիրելով զայն ձեր զաւակաց։

Մինչ վարժապետն ու վարժուհին կը կրթեն ձեր աղջկանց միտքն, մատերն ու ձայնը, դուք պարտիք կրթել նոցա սիրան ու հոգին, դուք պարտիք զգուանաց եւ համբուրից մէջէն ուսուցանել նոցա ինչ որ օտարը անկարող են ըմբռնել տալու այդ դեռաբոյս ծաղկանց։ Դուք պարտիք նոցա բարոյականի, պարտուց եւ տնտեսագիտութեան դասեր ու օրինակներ տալ, դուք

որպէս ուղղած էք նոցա առաջին դողողուն քայլերը, նոյնպէս պէտք է ուղղելով միւլք գիրենք աշխարհի մէջ, ուր յոյժ մեծ դեր մ'ունին կատարելու։ Դուք պէտք է առաջնորդ էք գիրենք ընկերութեան մէջ, զգուշացնելով հոն զանուոյ թոյներէն, դուք պէտք է տանիք գիրենք ի պարահանդէս եւ ի խոհանոց, դուք պէտք է ընտրէք նոցա ընթերցանելիք գրեանք, բառնալով նոցա ձեռքէն սիրային վէպերն որք կնոջ ծուլութեան միակ աղբիւրն են, միշտ լուրջ դաւաճանքներէ նախամեծար համարուած ըլլալով։ Դուք պէտք է մայրն ու բարեկամուն հին ըլլաք ձեր աղջկանց, զարդացնէք իւրեանց սրտին մէջ բարի հանգամանք, եւ ճանչցնէք նոցա պարտք եւ իրաւունք։

Ոչինչ այնքան արձագանգ կը գտնէ աղջըլան մը սրտին մէջ որքան մօր խրատները եւ ոչինչ այնքան սիրելի է որքան լսել մօր մը բերնէն անուշութեամբ ինչ որ վարժուհւոյ մը բերնէն կը լսուի խստութեամբ։ Ի մի բան, աղջկան մը կատարեալ կրթութիւն տալու կարող միայն մայրն է, եւ երբ մարք կատարեն խղճի մտօք իրենց պարտքը դէպ իրենց աղջկներն, եւ նոցա հասունութեան ատեն վստահ ըլլան նոցա կատարեալ դաստիարակութիւն տուած ըլլալուն, յայտնամ գինն՝ կազմաւորեալ սրտիւ եւ մտօք, կրնն՝ տան տիկին, կրնն՝ կրթեալ բառին բուն նշանակութեամբ, իրաւունք պիտի ունենայ աւան հաւասար ազատութեան տենչալու, ազատութեան՝ զոր ընկերութիւնը պիտի չընորհէ նմա այս կերպիւ միայն, քանզի անկիրթ կամ դեռակիրթ կնոջ համար ազատութիւնն, հրազէն մ'է անխելահաս մանկան մը ձեռք։

ԱՍԹԻՆԷ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

Լոնտոն իբր կեդրոն համաշխարհային վաճառականութեան. — Թէյմս եւ նորա տղերք. — Լոնտոնի դրամական ազնուականութիւնը. — Պօէրաց ազգային երգը։

Ո՞վ իմացած չէ, որ Լոնտոն առեւտրական տեսակէտով համաշխարհային նշանակութիւն ունի. ո՞վ լսած չէ նորա տղերքու,

Սիթիի (միջնաքաղաք) եւ վաճառական ազնուականութեան վրայ . սակայն շատ քիչ մարդիկ կրնան դադարաւ մը կազմել տուեալ տրական ամենամեծ նաւահանգիստի վրայ , որ բոլոր աշխարհի շտեմարաններու կեդրոնն եւ երկրագունտի ամենաբազմամարդ վայրն է :

Ամեն ոք դիտէ անտարակոյս թէ Լոնտոն թէյմիկ վրայ կը գտնուի . բայց քիչերուն յայտնի է թէ այդ գետն իւր լայնութեան եւ խորութեան շնորհիւ ամեն կարգի նաւերը դերամատչելի կ'ընէ մինչեւ Լոնտոնի մէջ , թէ Լոնտոնի նաւահանգիստը 108,000 մեթր տարածութիւն ունի քաղաքէն մինչեւ թէյմիկ բերանն եւ 4,000 մեթր տարածութիւն մինչեւ Վուլվիչ եւ Վիլթորիայի ու Ալպերդի տղերքը : Հազիւ թէ շատ մարդիկ դադարաւ ունենան տղերքու վրայ : Տո՛ւ կ'անուանեն անգլիայիք սահանադուներով փակուած արուեստական աւազանն որ մակընթացութեան ժամանակ կը բացուի իւր մէջ նաւերն ընդունելու համար ալիքներու հետ և տեղատուութեան ժամանակ կը գոցուի աւազանին ջուրն անհրաժեշտ բարձրութեան մը վրայ պահելով : Տղը չըջափակուած է փայտեայ զետեղքներով , որոց երկայնութեամբ կառուցուած են շէնքեր նաւերէն հանուած ապրանքներու պահպանման համար : Ասոնցմէ ետքը կուգան աղիւսաշէն բազմաթիւանի համբարանոցներ ահագին մեծութեամբ , անդ իւրաքանչիւր տեսակի վաճառքն իւր առանձին բաժանման մէջ կը դրուի : Տեղ տեղ շինուած են աւելի փոքր աւազաններ զորս կարելի է ցամքեցնել . նըմանօրինակ աւազաններն որք ցամաքած տղերք կը կոչուին , քնսուած նաւերու նորոգութեան համար կը ծառայեն :

Բոլոր տղերքու թիւն հարիւրի կը հասնի թէյմիկ երկու ասիւրուն վրայ և նոցանէ իւրաքանչիւրն առանձին առնով ամբողջ նաւահանգիստ մը կը կազմէ : Սղոս հասարակութեան ամէն փակ են . առանց մասնաւոր թոյլտուութեան ոչ ոք իրաւունք ունի այցելել անդ , բացի նաւատէրերէն եւ վաճառականներէն : Միայն քանի մը ճանապարհորդներ թոյլտուութիւն ստացած լինելով , լաւ քննած ու զիտած են ինչ որ հետաքրքրական եւ օրինակելի է տղերքու մէջ . ուստի յառաջ կը բերեմ աստ այդ ճանա-

պարհորդներէն միոյն նկարագրութիւնն այժմասին :

Տասնեակ տարիներու մէջ կառուցուած են տղերքն եւ միլիոնաւոր ոսկիներ ծախսուած են նոցա շինութեան համար : Տէրութիւնը բնաւ մասնակցած չէ այս ծախքերուն , այլ միայն շինութեան հրամանը տալով դո՛ւ եղած է : Ահագին բեռներով լի հարիւրաւոր շոգեհաւեր եւ առագաստաւոր նաւեր ազատօրէն կը տեղաւորուին այս աւազաններու մէջ , որոց շտեմարաններ լեցուն են մեծաքանակ ապրանքներով եւ մահանները կրնան պարունակել աւելի քան 5,500,000 դոյլ գինի , որ կը բերուի անդ տակաւին իւր պարզ վիճակին մէջ եւ այնտեղ ալքօթլականութեան կ'ենթարկի : Մահանն ուր կը պահուի ճամայիքա կղզիէն բերուած բոմբ , քանի մը պարագայից մէջ աւելի հետաքրքրական է գինիի շտեմարաններէն . բոմբ անթիւ տակառներն այրելու երկիւղէն առանց ճրագի հարկ կը լինի քալել սոյն մահաններու մէջէն , ձեռքն ունենալով թիթեղի փայլուն տախտակ մ'ոյր վրայ կ'անդրադառնայ դուրսի լոյսը նեղ պատուհանէ մը : Մահաններու տակ ահագին համբարանոցի մէջ դ'սրտուած կան կաղնեփայտէ բազմաթիւ տակառներ , որք կրնան պարունակել իրենց մէջ ճամայիքայի բոլոր ըմպելիներն : Այնտեղ կը պատրաստուին բոլոր այն խառնուրդ ըմպելիներն , որք վանալան անուամբ կը գործածուին ամբողջ աշխարհի վրայ :

Անկարելի է հաշուի տակ դնել ահագին քանակութիւնն թէյի , սուրճի , քաքաօի , չաքարի , մետաքսի , բուրդի , բամբակի եւ առ հասարակ դալիթային ապրանքներու , որոց համաշխարհային շտեմարանն ի վաղուց հետէ Լոնտոնն է : Երկու կիւսագնտերու ամեն տեսակ բերքերն այնպէս խնամով , այնպէս կարգաւ զետեղուած են անդ , որպէս բնութեան բոլոր արտադրութիւնը բնական պատմութեան թանգարանի մէջ : Արիւիկայի փղոսկրն , Անդիլիան ծովուն ձուկը , Սեւ ծովու եղերայ խուռկն ու զմուռը , Արաբիոյ եւ Սենկաի երեւոսն , Հապէշիտանի ջաղամի փետուրներ , Մատակասդարի բիւրեղ , Սղոթորայի հալուէ , խիտ հազուադիւս իրեր եւ ի վերջոյ այն ամենն , որմէ մարդս կրնայ չահ եւ օգուտ ստանալ ,

կարելի է գտնել Լոնտոնի մէջ : Այս չորս միլիոն բնակիչներով քաղաքին մէջ անտարակոյս , յիշեալ բոլոր իրերը . հարկաւոր կը լինին : Միմիայն արեւելեան – Հնդկաստանի տոքերու շտեմարանաց մէջ 225,000 տակառաջաւի ապրանք կը պարունակուի : Նաւերէն հանուած վաճառքները կառախմբերով իսկոյն որոշեալ համարանոցները կը ցրուին :

Վերթորից եւ Ալպերդի տոքերն , որ Լոնտոնէն 12,000 մեթր հեռի Վուլվիչի յանդիման կը գտնուին , աւելի ևս զարմանք եւ ապշութիւն կը պատճառեն : Նոքա միայն կը հաւասարին բազմաթիւ նաւահանգիստներու միասին առնելով : Նոցա ընդարձակման համար 1870ի առեւտները կը գործէին 3,000 մարդիկ , 600 հողակիր կառքերով , 17 շոգեդործիներով եւ ամեն տեսակ մեքենաներով : Անգլիացի մը , ապշած այս վիթխարի շինութեան վրայ , կառուցման ժամանակ գոչած է . « Եզրկալական բուրգերը բան մը չեն այս ձեռնարկութեան առաջ » : Տոքերն երեք ու կէս միլոն տարածութեամբ պատերով շրջափակուած են : Պատին բարձրութիւնը 40 ոտնաչափ է . վարի մասը 18 իսկ վերի մասը 10 ոտնաչափ լայնութիւն ունի . պատի շինութեան համար 24,000 հոսա Բորդլանտի շողախ գործածուեր է : Սոյն ահագին աւազանը փորելու համար դուրս հանուած է 6,000,000 խորանորդ մեթր աւազ , հող եւ կաւ : Վիճակագիր մը կը հաշուէ թէ , եթէ դուրս հանուած բոլոր հողը մէկ անգամէն վառքերու մէջ զետեղէին , այն ատեն հողով բեռնաւորուած կառքերու երկայնութիւնն 7000 միլոն տարածութիւն պիտի բռնէր : Այնտեղ ջուրին տակ երեւցաւ նախապատմական ժամանակուան անստաւ մ'ոյր մէջէն հանուեցան հիւսիսային եղջերուի ծնոտներ , հետմէական սափոր , կաղնիէ փորուած հին մակոյկ մը , որ հաւանորէն հին ատենուան ձկնորս անդլիացիի մը կը պատկանէր : Բրիտանական թանգարանի մէջ կը գտնուին այժմ վերոյիշեալ թանկագին հնութիւնները :

Այս տոքեր , որք կը նսեմացնեն եզրկալական բուրգերն , ընդ հանրապէս կը լեցուին հեռաւոր աշխարհներու , Աւստրալիոյ , Չինաստանի , Հարաւային Աֆրիկէի ապրանքներով , եւ երբեմն կը պարունակեն

աւելի քան 700,000 տակառաջաւի : Լոնտոնի տոքերն առաքատաւոր նաւերու եւ միջին մեծութիւն ունեցող շոգեհանաւորու համար կը ծառայեն առաւելապէս :

Այս ամեն հարստութիւնն , այս ամեն տոքերն ու չէնքերը կը պատկանին չորս ընկերութեանց , որք կը կառավարեն մայրաքաղաքի առաջնակարգ առեւտրական տուներն , որոց մէջ կան հարիւրաւոր ծառայողներ եւ հազարաւոր գործաւորներ : Սոյն չորս ընկերութիւններէն ամենագործուն իւր տոքերու մէջ միշտ ունի 300,000 տակառաջաւի ապրանք 15,000,000 անգլ . ոսկիի արժողութեամբ : Բաժնետեարք իրենց գրամագլխի երեք կամ չորս առ հարիւրը կ'ընդունին միայն : Ընկերութիւնք ոչինչ կը ներմուծեն եւ ոչինչ կ'արտահանեն : Խորհրդարանը միայն թոյլտուութիւն կուտայ , իսկ մնացեալ բոլոր գործերն ընկերութիւնները կը կարգադրեն առանց կառավարութեան միջամտութեան :

Լոնտոն ամբողջ աշխարհի հետ վաճառականութիւն կ'ընէ եւ իւր աշխարհագրական յարմար դրից պատճառաւ երկրագնաւի առաջին նաւահանգիստը կը համարուի . իւր բնակչաց թուով կը գերազանցէ Սլովոյիան եւ ունի առաւել քան 4,500,000 բնակիչ . քաղաք մը չէ Լոնտոն , այլ քսանի մը ահագին քաղաքներու միացումն : Ի Լոնտոն կան քանի մը Լոնտոններ , ելմտական , առեւտրական , խորհրդարանական , թաղապետական եւ : 1879ին աւելի քան 66,000 նաւեր , որք 50,000,000 տակառաջաւի ապրանք կը պարունակէին , այցելած են Լոնտոնի աւազանն , երկրագնաւի բոլոր նշանաւոր կէտերուն հանդիպելէ ետքը : Ներմուծելի գլխաւոր նիւթերն են փայտ , ցորեն եւ ամեն տեսակ ուտեստի պաշարներ : Վաճառականութիւնը սլարտի սնունդ մատակարարել այս մարդկային ծովուն , որ վարժուած է օրն երեք անգամ միս ուտել : Լոնտոնէ զատ ամբողջ անգլիական ազդն ալ ձեռնարկայ է յիշեալ սովորութեան : Անգլիա վաղուց արդէն չարտադրեր այժման ցորեն , որքան անհրաժեշտ է իւր ապրուստին . այսպէս օրինակի համար անցեալ տարի չորք 70 միլիոնի չեւոյնիկ ցորեն ստացուեցաւ հունձքէն , մինչդեռ երկիրն 250 միլիոն չեւոյն վերիկ ցորեն գործածած է նոյն տարին :

Պակսած ցորենը Միացեալ Նահանգներէն մեծ մասամբ կը բերուի Լոնտոնի, Լիվըր-բուլի, Նիւ-Գատչիի եւ Կլաքքովի նաւահան-գիստներն : այսպէս եւ անասունները :

Անասնապահութիւնն որքան եւ արա-գապէս կը զարգանայ Անգլիոյ մէջ, այնու ամենայնիւ միի սպառումն առաւել եւս կ'ընդարձակի եւ ամեն անգամ ահագին քանակութեամբ կենդանի անասուններ, աղած եւ չորցած զանազան միւսեր կը բերուին անդ Միացեալ Նահանգներէն :

Սակայն Լոնտոնի նաւահանգիստը միայն Անգլիոյ համար չ'աշխատիր : Գաղթային ապրանքներու գլխաւոր մթերանոցն է նա Եւրոպայի մէջ, մասնաւորապէս սուրճի, չաքարի եւ թէյի : Անգլիական ոչ մի նա-ւահանգիստ Լոնտոնի չ'ափ թէյ կը ներ-մուծէ, թէյ որ անգլիացեաց ամենասիրելի ըմպելին է : Ոչ մի նախաձայնի, ո՛չ մի ահրատ, ո՛չ մի ընդունելութիւն չի լի-նիր առանց քանի մը բաժակ թէյի եւ այն ալ այնպիսի զօրաւոր թէյի որ հարկ կը լինի կաթ խառնելով հետը թեթեւցնել զայն : Անգլիոյ մէջ պատրաստած թէյի խառնութիւնը հաւասար է սեւ գարնջուրի խառնութեան : Ամեն տարի մայիս ամսի մէջ չողենուային յարաբերութիւնը կը վերանորոգուին Շան-կայի եւ Լոնտոնի արեւելեան - հնդկական տոքերուն միջեւ : Կան նաեւ որք մէկ ան-գամէն 1,500,000 հոսա թէյ կը բերեն : Այն նաեւ, որ, թէյյով բարձաւած, հող-մերու եւ հոսանքներու դէմ յուսահա-տական պատերազմ մը մղելէ յետոյ առաջին Լոնտոն կը հասնի, մեծ նուէր կ'ստանայ եւ ուրախութեամբ կ'ընդունուի Լոնտոնի հա-սարակութեան կողմէ :

Բաց ամսի Լոնտոն բրդի ամենամեծ շու-կան է յԵւրոպա : Մի միայն նորա արեւել-եան - հնդկական տոքերը կրնան ընդունիլ իրենց մէջ աւելի քան հարիւր հազար հակ բուրդ եւ գնդներուն տասն եւ հինգ հազար հակ կրնան ընծայել մէկ անգամէն : Բուրդի հրապարակային վաճառումը տարուան այլ եւ այլ եղանակներուն տեղի կ'ունենայ ի ներ-կայութեան բազմութիւն օտարալեզաց որք ահագին քանակութեամբ բուրդ կրնան զանել հարաւային Աֆրիկէի, Ուրուկուայի, Արժանթինի Հանրապետութեան եւ մասնա-ւորապէս Աւստրալիոյ սքաւէլի բուրդը :

Լոնտոնի տոքերն ընդունելով այսպիսի հսկայական քանակութեամբ ապրանքներ, իրենք ալ դուրս կը զրկեն անգլիական վա-ճառքներու եւ ճարտարադորձութեանց նոյն-պիսի քանակ մը : Մէն մի տարի Լոնտոնի նաւահանգիստն ներմուծող օտարերկրեաց եւ գաղթային ապրանքներու արժէքն 105 միլիոն, իսկ միայն արտահանեալ անգլիա-կան ապրանքներու եւ ձեռագործերուն 45 միլիոն անգլիական ոսկիէ աւելի է : Այս-պէս ուրեմն Լոնտոնի առեւտրական չրջանն 150 միլիոն անգլիական ոսկին կ'անցնի : Այս կողմէ աշխարհի ո՛չ մի նաւահանգիստ եւ ո՛չ իսկ Նիւ-Եորք կրնար հաւասարիլ անոր : Մի միայն մաքսային տուրքերն որ Անգ-լիոյ մէջ առաւել ազատական քան պահպա-նողական (հովանաւորող) հանդամանք մ'ու-նին, Լոնտոնի նաւահանգիստի մէջ 10 միլիոն անգլիական ոսկի արդիւնք կը բերեն, որ-քան չ'են բերեր ո՛չ մի անգլիական նաւա-հանգիստ եւ ո՛չ իսկ Լիվըրբուլ, որ իւր ա-ռեւտրական ամենընդարձակ յարաբերու-թեամբք նոյնպէս հռչակաւոր է :

Ի Լոնտոն առեւտրական բոլոր յարաբե-րութիւնները, բոլոր գործերը կեդրոնա-ցած են Սթրէի մէջ : այսպէս կը կոչուի քա-ղաքի ամենաշին մասը, — հինաւուրց Լոն-տոնիումը : Այն տեղ են երկտական, առեւ-տրական եւ ծովային վարչութեանց, մեծ վաճառականներու, գրամատէրերու եւ սե-ղանաւորներու գրասենեակներն : այնտեղ կը գտնուին նոյնպէս գլխաւոր նամակա-տունը, սակարանը, դրամատունը, մաքսա-րանը, փողերանոցի պալատն եւ Թայմզի տալարանն : այնտեղ են եւ քաղաքային խոր-հրդարանը, Ս. Պօղոսի Լայր եկեղեցին եւ Լոնտոնի հռչակաւոր աշտարակը : Սիթին ա-հագին քաղաք մ'է պատմական, եւ որ ա-ռաւելն է դրամի քաղաք մ'որ ունի իւր առանձնաշնորհումներն եւ ազատութիւ-նը, նախնիքներէ ժառանգած : Լորտ-Քաղաքապետը կ'ընտրուի Սիթիի ազատ քաղաքացիներէն, մէկ տարուան պայմա-նաժամաւ եւ սոյն միջոցին կը բնակի Սի-թիի Մէնըն-Հաուզի (քաղաքային պաշ-տոնատուն) մէջ ուր կուտայ չքեղ խնջոք-ներ եւ պարահանդէսներ, որոց հա-մար քաղաքէն ստացած իւր 10,000 անգ-լիական ոսկիէն զատ նոյնքան եւս իւր գըր-

պանէն կը ծախսէ : Այս պաշտօնի համար կ'ընտրուի ընդհանրապէս Լոնտոնի առեւտրական ազնուականութեան անդամներէն մին : Սիթիի միլիոնատէր մը :

Նորածեւութիւնը վերջերս մեծա գործեց եւ հին Լոնտոնի միջնադարեան փողոցներու մէջ, որոց սահմանին վրայ Լորտ-Փաղաքապետն երբեմն կը կեցնէր թագաւորն որպէս զի անոր ճանչել տայ Սիթիի առանձնաշնորհումները :

Աղքատութիւն կահաւորուած, բայց միլիոններ դարձնող անպաճոյճ գրասենեակներուն փոխանակած են նոր եւ փառաւոր գրասենեակներ : Հին ու ցած տներու տեղ կը կառուցուին հոյակապ շէնքեր, որք մի մի շքեղ պալատներ են : Սիթիի մէջ ամբողջ տեսլային եւ տարօրինակ գործունէութիւն մը կը տիրէ : Առտուան ժամ 9-էն մինչեւ երեկոյեան ժամ 3-ն ամեն ոք զբաղուած, ամեն ոք կ'աշխատի առանց բռնի մը իսկ կորսնչներու կողմնակի խօսակցութեանց համար : Գրասենեակի տէրն ամեն բանէ առաջ արագապէս աչքէ կ'անցունէ թաշկը, ապա նամակները կը նայի, դրամատանց, վաճառականաց եւ միջնորդները կ'ընդունի եւ սակարանը կ'երթայ : Այս օրին առանց նըստելու չուտով մը կը նախաճաշէ Սիթիի ամենէն նորածեւ ճաշարաններէն միոյն մէջ կամ իւր գրասենեակին, ուր տնտեսուհին, որ շէնքի եւ գործոց մարրութեան կը հսկէ, կը պատրաստէ համեստ նախաճաշ մը : Տեսակցութիւնը ժամանակին կը կատարուին եւ եթէ մին ուշանայ, անտարակոյս, օտարական մը լինելու է : Առեւտրական գործի համար տրուած խօսքը սուրբ է : «Պարկեշտութիւնը լաւագոյն քաղաքականութիւնն է» ըսած է երբեմն Ֆրանքլին : Այսպէս ուրեմն անկեղծութիւնը եւ ազնուութիւնը գործերու ամենադժուար միջոցներն են :

Ժամ վեցին Սիթիի անխոնջ բազմութիւնը արագ օրէն կ'սկսէ ջրուիլ : Ամեն ոք հանրակարեւրով կտմ թրամիլէյով տուն կ'ըլտապէ : Ի Սիթի կը մնան միեւրոյններու եւ խանութներու պահապաններն եւ տուններու գահապանները : Իրիկուան, քաղաքի այս գործունէայ մասն յոյժ տխուր կերպարանք կ'ըլդենու : Փողոցներու մէջ ոչ ոք, եւ ամենաչնչին չընկ մ'իսկ չը լսուի : Այսպէս է եւ կիրակի օրերը : Անդլիական

կիրակին մինչեւ այժմ անպայման կերպով հանգստութեան օր կը համարուի : Ամեն մարդ իւր տունն է, շատերը քաղաքէն դուրս են եւ մարդ մը չի տեսնուիր քաղաքի սոյն մասին մէջ, վախճալով ոտնակոխ ընել ի վաղուց արմատացած աւանդութիւն մը : Կատարելապէս մեռած վիճակի մէջ կը գտնուի քաղաքը :

Սիթիի մէջ առեւտրական եւ այլ գործերը գրեթէ բոլորն Անգլիացոց ձեռքն են, սակայն կան նաեւ առեւտրական ահազին տներ, որոց շուրջ կը կենան ամեն ազգէ մարդիկ, գերմանացի, ֆրանսացի, իտալացի, ամերիկացի, յոյն, հայ, չին, պարսիկ, հնդիկ եւ բազմաթիւ հըրեայք, որք դրամ կը խաղան :

Սիթիին բոլոր ազգաց մշտական տօնավաճառն է : Աշխարհի ամենահարուստ սեղանաւորներ ունին անդ իրենց զխաւոր գըրասենեակներ : Սիթի աշխարհի ամենամեծ գրամական շուկան է ուր կեդրոնացած են բոլոր օտարազգեայ փոխառութիւններն : Սիթի չարժման մէջ կը դնէ առեւտրական եւ ձեռագործական արուեստից ամեն կարգի ձեռնարկութիւններն : Սոքա ամենքը դրամադուիս կը պահանջեն եւ դրամադուիսը շատ ածան է ի Լոնտոն : Սիթիի մէջ կայ դրամադուիս ամենայնողութիւն եւ ամենավաճառ գործերու համար եւ այս կողմէ աշխարհիս ոչ մի քաղաք կարող է մրցիլ Սիթիի հետ :

Անդ միլիոնատէրք կ'անանկանան բոլորովին եւ չքաւորն ահազին դրամադուիսներու տէր կը լինի եւ շատ անգամ մարդասիրական հաստատութեանց եւ դպրոցներու համար մեծ քանակութեամբ ստակ կը գործածէ :

Լոնտոնի հարուստները կը բնակին մեծ մասամբ քաղաքի շրջակայքն ուր կը գտնուին նոցա ապարանքներն չրջապատուած դրաստաններով եւ այդ ինքերով : Երկաթուղին Սիթի կը բերէ դայնս առտուն եւ իրիկուան տուն կը տանի, որոչեալ ժամերու մէջ եւ միւսնոյն գնացքներով : Սոյն ամենօրեայ շարժում կը կատարուի ամենայն ճշգրտութեամբ, որ արդարեւ ամեն մարդու կրնայ յուսահատութիւն պատճառել, իսկ անգլիացոյն՝ բնաւ : Առեւտրական ազնուականութեան անդամներէն ոմանք Սիթիիէն հինգ մղոն

հեռի կը բնակին իրենց սեփական գիւղերու մէջ կամ ծովին եզրը, այնու ամենայնիւ ամեն օր կը կատարեն իրենց սովորական այդ ահագին երթեւեկը: Սիթիի շատ վաճառականներ, գործակատարներ կը բնակին Լոնտոնի շրջակայքն, մեծ տարածութեամբ հեռի իրենց գործատեղիներէն. սակայն այդ գործակատարը ամբողջ տարի կ'երթեւեկեն, Թէյմպի վրայէն չողենաւերով, երկաթուղիներով: Այս կողմէ Պոլսը Լոնտոնի մանրանկարը կարելի է համարել:

Սակայն այս ամենը Լոնտոնի առեւտրական եւ դրամական մեծութեան փայլուն կողմն է, իսկ մեծութեան միւս կողմը, կողմ տփգոյն, խաւարեալ եւ յաւէտ քստմնելի, կրնաք տեսնել անգլիացի տաղանդաւոր վիպասաներու հեղինակութեանց եւ տընտեսագիտական նոր գրականութեան մէջ: Սիթիի վիթխարի հարստութեանց բով կը թագաւորեն մեծ եւ սոսկալի չքաւորութիւն, աներեւակայելի թշուառութիւն, զագրելի խայտառակութիւններ: Լոնտոնի բոլոր չքաւոր դասի բնակարանները Սիթիի մէջ կը գտնուին: Տոբերու քով, յուէքինկ, լի են ամեն ազգէ նաւաստիներ, ձկնորսներ, որք կ'արբենան, կ'անպատուեն զիրար, միշտ կը կռուին իրարու հետ, եւ ծանրապէս կը վիրաւորեն, արիւնով կը ներկեն զիրար: Այնտեղ են համախմբուած, ապաւինած ամենազգի խաբէքտները, գողերն եւ մարդասպաններն իսկ: Ոստիկանութիւնն ալ շատ լաւ կը ճանչէ այս ամեն մարդիկն: Բոլորովին վտանգաւոր է այցելել Սիթիի այդ մասին բնակարաններն, որք սոսկալի չքաւորութեան եւ նախատալից անամօթութեան կնքով դըրօշմուած են: Միայն քանի մը փորձառու ոստիկանաց ընկերակցութեամբ կարելի է մտնել անդ, այն եւս կէս գիշերին եւ առաւօտեան ժամ հինգին:

Այն ճանապարհորդներն որք այցելած են այս բնակարաններ, ծանր տղաւորութեան մը ներքեւ վերադարձեր են տուն, այնպիսի տղաւորութեան, զոր կ'զլայ մարդ սարսափելի երազէ մը արթնցած ժառանկ: Այնպէս կը թուի թէ մարդկային կենաց շրջանէն դուրս նոր աշխարհ եւ նոր կենաց մէջ կը մտնես, երբ կ'այցելէս այդ

կաղմերը. սակայն այդ նոր աշխարհն եւ կեանք մարդկային ոչինչ ունին. ամեն ինչ ստոր, ամեն ինչ խորշելի է անդ, աւելի խորշելի քան անասնայինն: Տնտեսագէտը գոնէ անգամ մը խորհած են դրացիութեան այն պատճառներուն վրայ, դրացիութեան որ կը տիրէ այս ամենանուրբ քաղաքականութեան եւ անմարդ կային չքաւորութեան եւ վայրենութեան միջեւ:

Աւելի լաւ չէ՞ հետեւիլ Պօէրաց ստորագրեալ գաղափարներուն, քան ունենալ Անգլիոյ քաղաքական զօրութիւնը հանդերձ իւր մեծ թշուառութեամբ: Պօէրաց այն գաղափարները կ'ամփոփուին նոցա ազգային երգի մը մէջ, երգի մը որ սրտաշարժ է իւր նախնական պարզութեամբ եւ ճշմարտութեամբ.

«Մէն մի ազգ ունի իւր երկիրը: Մենք եւս Ափրիկէի հողի վրայ կը բնակինք: Ասկէ դատամբողջ երկրագունտի մէջ մեզ համար չըկայ լաւագոյն երկիր մը: Մենք կը խրոխտանք հարաւային Ափրիկէի ազատ զաւակաց անունով:

«Մէն մի ազգ ունի իւր լեզուն: Մենք ամենքս Հրուանդանէն մինչեւ Թրանսվալ միեւնոյն լեզուով կը խօսինք: Մեզ ի՞նչ պէտք օտարին բարբառը: Հարաւային Ափրիկէի լեզուով խօսինք, որպէս խօսած են մեր հայրերն ու նախահայրերը:

«Մէն մի ազգ ունի իւր աճումն եւ նուազումը: Միշտ իմաստուն եւ բարի է այն զոր կ'որոշէ Աստուած: Մեր օրն ալ կուգայ: Հաստատուն հաւատքով յուսանք որ կը հասնի Հարաւային Ափրիկէ, յուսա՛ առ Աստուած:

«Մէն մի ազգ ունի իւր կրօնը: Նա միշտ բարի կը ներշնչէ եւ չարը կը խափանէ, կ'ատէ: Ժողովրդի օրէնքներն համաձայն են նորա բարուց, նորա պիտոյից: Կը փափաքինք միեւնոյն սովորութեանց մէջ մնալ մենք—որոյ իբր հարաւային Ափրիկէի:

«Մէն մի ազգ ունի իւր իրաւունքն, որքան սակաւաթիւ, թոյլ, անզօր եւս լինի նա: Կայ ամենատես Աչք մը, կայ Ձեռք մը որ ամեն անարդարութեանց սահման կը դնէ: Կը տեսնէ Աստուած մեր նեղիչներն եւ կը քաջալերէ հարաւային Ափրիկէն:

«Ամեն ազգեր եւ ժողովուրդ ունին մի Աստուած որ իւրաքանչիւրի բազդն ու վի-

ճակը կը տնօրինէ : Նա կուտայ իւրաքանչիւր աղլի իւր լեզուն , իւր սահմանն , իւր օրէնքն , իրաւունք եւ ժամանակ : Ո՛վ չուզէր խոստովանիլ այս , կը պատժուի : Ո՛վ Աստուած , լեր սլաշտպան հարաւային Ափրիկէի :»

Պ. Տ.

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԻՄ ՎԻՃԱԿԸ

Ես նոցանից չեմ , որք հարթփած ճամբով
Շտապում են հասնիլ խաղաղ օթեւան ,
Դիտել այնտեղից անտարբեր կերպով
Ջրկանք , հալածանք բռնակալութեան :

Անձուկ աշխարհում ես միշտ տքնումեմ
Մարբել տատասկոտ , փշտ ճանապարհ .
Երբէք փոթորկից ես չեմ վախենում
Ու մի կողմ քաշլած , հանդիստ որոնում :

Տարբեր խաղը ինձ չէ սարսափում ,
Մօտ ծանօթ է ինձ նրա նախերգանք .
Ձախորդութիւն է երգվում նրանում
Ճնշող օրերի դառը հառաչանք :

Յաճախ ինձ թւում է այդ րոպէներում ,
Թէ մրկից յետ խաղաղ կեանք կ'գայ .
Որը սպանիլ խաւար օրերում
Գրաւել , սիրուն , փայլուն կ'երեւայ :

Նըրանցից չեմ , որք ընկեր չեն սիրում ,
Սեղմում են կրծքից սաստիկ թշնամուն .
Իրանց հանգիստը չեն փոխարինում ,
Մի սիրտ որոնում քնքրել , զգայուն :

Յայտնի է ինձ բունն սիրոյ զգացմունք
Ես շատ թշնամիք գառջ նրանով .
Քանդեցի պատիր , կեղծ ընկերութիւնք
Երբէք իմ անձը չը խնայելով :

Մի է ինձ համար , արդեօք կը զրկվի՞մ
Ամենայեաին միակ ընկերից .
Թէ հալածվելով ես կը թափառիմ
Երկրէ երկիր , տար հայրենիքից :

Երբէք իմ փոքր չեմ ձգի այնքան ,
Որ սիրած անձիս կուռքի տեղ պտտեմ .
Վախկոտ , թուլամորթ ստրուկի նման
Նորս ոտքերը ընկնում ու լիզեմ :

Ես նրանցից չեմ , ում թիկն է հարկաւոր ,
Որ մանկութիւնից է օգնութեան սովոր .
Աւանց օտարի կ' կոչի շուտով ,
Նստում վեր կենում օտարի-խօսքով :

Հազիւ լոյս աշխարհ ընկայ խաւարից
Մերկանդամ , բոպիկ , նիհաժ , անօթի ,

Փշուտ աշխարհը վիշտ ներշնչեց ինձ ,
Կապեց կաշկանդեց դառն աշխատանքի

Ես աշխարհ եկայ կեանքի հետ կռիւլ
Խորտակել չարը իմ ազատ հոգւով .
Մինչ առողջ կուրծքս վիշտը չի լափել
Ըստրուկ դարձրել , խոնարհիլ գլխով :

Արձակ , համարձակ դարձեալ նոյն շաւղով
Սկսեալ այն օրից ես ընթանումեմ .
Ջրկանք , հալածանք , սուր մագիլներով
Ինձ չեն ստրսափում եւ ես ազատ եմ :

Ժընէվ ՄիեԱՅԻԼՈՎ . Թարգմ. 204



ԿԱՌԱՓՆԱՅԵՄԻՆ ՎՐԱՅ ԱՄՈՒՄԵՆԻԹԻԻՆ

(Շար . Կոթորդ . Բռնէն)

—Բայց , հարցուց դքսուհին , ո՞վ պիտի
դատէ յանցանաց ծանրութիւնը :

Անծանօթը վարանեցաւ վայրկեան մը ,
յետոյ ուղիղ նայեցաւ խնամապետուհւոյն :

—Ձեր Բարձրութեան խիղճը , ըսաւ :

—Ուրեմն կը վստահի՞ք այնմ :

—Բոլորովին :

—Իրաւունք ունի՞ք :

—Այո , եթէ Ձերդ Բարձրութիւն ծանր
գտնէ մեղքն , անոր գլուխը պիտի ստանամ
փոխան Ռօգգօ տէլ Բիլզոյի գլխին :

—Կ'երդնում :

—Ի՞նչ բանի վրայ :

—Այս Աւետարանին եւ այս Խաչելու-
թեան վրայ :

—Լաւ : Մտիկ ըրէք , տիկին , զի ամ-
բողջ պատմութիւն մ'է :

—Մտիկ կ'ընեմ :

—Մեր ընտանիքն փոքրիկ տան մը մէջ
կը բնակի , Ռօզաւնօ գիւղէն կէս մղոն հե-
ռու ընդ մէջ Գօսանդայի եւ Ս . Եւփիմէի .
երկու ծերունի , հայրս ու մայրս , եւ եր-
կու երիտասարդ , քոյրս եւ ես , կը կազմենք
մեր ընտանիքը : Քոյրս կը կոչուի Գոս-
թանցա :

Մեր չըջակայքը կը տարածուի տղե-
ցիկ պարոնի մը կալուածներն որոց վրայ
ծնած ենք բաղդին բերմամբ , եւ հետեւա-
բար անոր հպատակը ենք :

—Ի՞նչ է այդ պարոնին անունն, ընդ-
միջեց խնամապետուհին :

—Նախ ոճիրը եւ յետոյ անունը պիտի
ըսեմ :

—Լաւ, չարունակեցէք :

—Մեր փոքրիկ տէրը մեծաշուք պարոն
մ'էր, գեղանի, ազնուական, հարուստ,
առատածեռն, եւ ի վերայ այսր ամենայնի
ատելի եւ ահուելի : Զի երբ անոր մօտիլը
կը տեսնէ՞ չկայ ամուսին մը որ իւր կնոջ
համար չ'դողայ, չ'կայ հայր մը որ իւր դըս-
տեր համար չ'երկնջի եւ եղբայր մը որ իւր
քրոջ համար չ'սարսափի : Բայց հարկ է նաեւ
խոստովանիլ թէ իւր ըրած բոլոր չարիքը
արդիւնք էր չար ոգիի մը ոչ զժողովրդ ա-
նոր ականջէն վար կը փչէր : Այս չար ո-
գին իւր բնական եղբայրն էր, անունն է
Ռէյմոն լը Պադաու :

—Ռէյմոն լը Պադաւ, դոչեց խնամապե-
տուհին, նա որ սպաննուեցա՞ւ այս գիշեր :

—Նա ինքն :

—Այն ճանչնա՞ք իւր բականքն :

—Ես եմ :

—Ուրեմն Ռօդօ տէլ Բիլլզօն շէ՞, դոչեց
դքսուհին :

—Ես եմ, կրկնեց անծանօթն կատար-
եալ հանդարտութեամբ :

—Դուք ինքնին արդարութի՞ւն գործել
սկսաք ուրեմն :

—Եկի խնդրել երեք օր առաջ, եւ մեր-
ժեցին :

—Այսօր ի՞նչ կը խնդրէք ուրեմն :

—Վրէժ խնդրութեանս լաւապէս մասն,
Տիկին . Ռէյմոն լը Պադաու ոճրոյն թեյա-
դրիչն է միայն, իր եղբայրն է նճրադորն :

—Իր եղբայրն, դոչեց դքսուհին, իր
եղբայրն, բայց եղբայրն է Անթօնիէլլօ
Գարաշիօլօ :

—Ինքն իսկ, տիկին, պատասխանեց
անծանօթն իւր ազդու նայուածքը խնա-
մապետուհւոյն վրայ ուղղելով :

Իզատել տգողնեցաւ եւ աղօթարանին
կրթնեցաւ . կարծես իւր սրունք կը պակ-
սէին . բայց իսկոյն սիրտ առաւ :

—Շարունակեցէք, պարոն, չարունա-
կեցէք :

—Արդեօք յանցաւորին անունը դատա-
ւորին վճիռը չ'պիտի փոխէ, հարցուց ան-
ծանօթն :

—Ո՛չ, պատասխանեց խնամապետուհին,
ո՛չ երբեք, կ'երգնում :

—Գարձեալ այս Աւետարանին եւ այս
խաչելութեան վրայ :

—Այո՛, չարունակեցէք, կ'ունկնդրեմ :

Եւ նորէն ստացաւ այն դիրքն ու այն
դէմքը, զոր ունէր սոսկալի յայտնութենէն
առաջ, եւ անծանօթն նոյնպէս վերսկսաւ
նայն ձայն՝ որով սկսած էր պատմել ընդ-
հատեալ պատմութիւնը :

—Ա՛յլ տիկին, տիկին, թէ կոմսն Անթօնի-
էլլօ Գարաշիօլօ դեղանի, ազնուական, հա-
րուստ եւ վեհանձն պարոն մ'էր, բայց եղ-
բայր մ'ունէր որ իրեն համար այնպէս էր,
ինչպէս օձն մեր նախահարց համար, ոգին
չարեաց :

Ասկէ շուրջ վեց ամիս առաջ օր մը կոմս
Անթօնիէլլօ որսի ելած էր ի սահմանս իւր
անտառաց, մերձ ի մեր տուն : Իշայծեման
մ'ետեւէն ինկած ըլլալով՝ ճամբան կորուսեր
էր . տաքցած ու ծարւած էր . ծաղկահոսակ
ազջիլ մը նշմարեց, որ տղիւրէն կուգար
ուսին վրայ ջրալից աման մը . ձիէն վար
դատիկեց, սանձը թեւն սուաւ եւ եկաւ
ջուր ուղեց ազջիլէն . այդ դեռատի ազջիկն
էր Գօսթանցա, իմ քոյրս :

Սարսուռ մը զգաց խնամապետուհին
բոլոր մարմնով, բայց անծանօթը չարունա-
կեց, առանց այս վերջին խօսքերուն ար-
դիւնքը նշմարել ձեւանալու :

—Ըսի ձեզ, տիկին, ինչ որ էր կոմսն
Անթօնիէլլօ . ներեցէք որ ըսեմ նոյնպէս
ինչպէս էր քոյրս :

Վեցասամանեայ ազջիկ մ'էր, հրեշտա-
կային գեղեցիկութեամբ, Տիրամօր պատկե-
րի մը պարկեշտութեամբ : Իւր աչաց մէջէն
մինչեւ իւր հոգւոյն խորը կը թափանցուէր,
որպէս վճիռ ջրոյ մէջէն լճին մինչեւ խորը
կը նշմարուի եւ հայրն ու մայրն, որք ամեն
օր կը նկատէին՝ երբէք չար խորհրդոյ ստուե-
րըն անգամ կարգացած չ'էին անդ :

Գօսթանցա ոչ զոր կը սիրէր, եւ միշտ
կ'ըսէր թէ զԱստուած միայն պիտի սիրէ
եւ, իրօք, իւր նրբին եւ փափուկ բնու-
թիւնը նիւթէն չառ բարձր էր, որով այս
մարդկային դձուութիւնն իւր կուսական
սպիտակ պատմութեանը պղծել անկարող էր :

Բայց, ըսի ձեզ, տիկին, եւ թերեւս
դուք իսկ գիտէք, կոմսն Անթօնիէլլօ գե-

դանի, աղնուական, հարուստ եւ վահանձն պարոն մ'է: Գօսթանցա առաջին անգամ կը տեսնէր այդ գասէն մարդ մը, կոմսն Անթօնիէլլօ ալ առաջին անգամ անշուշտ կը տեսնէր այնպիսի կին մը: Այս երկու բարձր բնոյթը մին մարմնով միւսն հոգով, յիրեար ձգեցան եւ երբ, երկար խօսակցութենէ մ'ետք, բաժնուեցան, Գօսթանցա սկսաւ մտածել գեղանի պատմութիւն, եւ կոմսն Անթօնիէլլօ հրաշագեղ մանկամարդուհին միայն երազեց:

Խնամապետուհւոյն շրթունք կծկուեցան, բայց վանկ մ'իսկ չ'արտասանեց:

— Ամեն ալ պէտք է ձեզ ըսել, տիկին: Գօսթանցա չ'գիտեր թէ այդ գեղեցիկ երիտասարդ Գարաշիօլօ կոմսն էր. կը կարծէր թէ իւր հետեւորդներէն մանկալուսի մը կամ պինակիր մ'էր, թէ պարկեշտ ու հարուստ (քանզի գեղջլուհւոյ մը համար հարուստ էր ըլլալ), կրնար նկատուի այդ գեղեցիկ եւ սիրելի:

Այս կերպով երեք չորս օր շարունակ տեսան զիրար, միշտ աղբեր ճամբուն վրայ, եւ այն անգին իսկ ուր անոնու եցան առաջին անգամ. բայց օր մը, կէս օրէն վերջ, մոռցան ինքզինքնին, այնպէս որ հայրս, անոր ուշանալը տեսնելով, կասկածելով, հրաջան յուս, գնաց ի խնդիր աղջկանն:

Ճամբու մ'անկիւնն երիտասարդի մը հետ նստած տեսաւ զայն:

Հայրը տեսնելուն, Գօսթանցա ահաբեկ եղջերուի մը պէս օտարն մ'ըրաւ, եւ երիտասարդն ալ մտաւ յանառա: Հօրս առաջին շարժումն եղաւ հրացանը իջուցնել եւ նշան առնել, բայց Գօսթանցա զինավորին եւ Գարաշիօլօյին ընդ մէջ նետուեցաւ: Հայրս վերցուց հրացանն, բայց պարմանի կոմսը ճանչցեր էր:

— Եւ իրօք նոյն ինքն Անթօնիէլլօ Գարաշիօլօ էր, մրմնաց խնամապետուհին:

— Նոյն ինքն, ըսաւ անձանօթը:

Նոյն երեկոյին, հայրս կնոջ ու աղջկանը պատուիրեց որ պատրաստ լինին զիշերը մեկնելու. երկուքն ալ տունը թողլով պիտի երթային ապաստանիլ Մօնթէ Ղէօնէ հօրաբեռ մը տունը: Մեկնելու պահուն, հայրս մէկ կողմ առնելով Գօսթանցա, ըսաւ.

— Եթէ նորէն տեսնես կ'ապանենք մ'զինք:

Գօսթանցա հօրս ոտքը փարեցաւ, խոտանալով չ'տեսնել, յետոյ ձեռքը միացած եւ արտասուածոր աչօք, թողութիւն խնդրեց: Հայրս գրկեց զայն, համբուրեց ճակատն ու ներքեց. Գօսթանցա մօրն հետ չուեց, եւ երբ առտու եղաւ, երկուքն ալ արդէն Անթօնիէլլօ կոմսին հողերէն դուրս էին:

Խնամապետուհին շունչ մ'առաւ:

— Յաջորդ օրն, հայրս գնաց գտաւ կոմսը: Չ'գիտեմ ինչ տեղի ունեցաւ իրենց մէջ, սաշափը միայն գիտեմ որ կոմսը պատուոյն վրայ երգ ուաւ թէ ապագային մէջ Գօսթանցայի պատուոյն նկատմամբ ալ վախելու տեղի չ'ունի հայրս:

Այս տեսակցութենէն օր մ'ետք, կոմսն ալ մեկնեցաւ ի Նաբօլի:

— Այո՛, այո՛, կը յիշեմ իւր դարձն, մերմուաց խնամապետուհին, ետքը՞, ետքը՞:

— Ետքը, տիկին, ետքը, շարունակեց յիշել զոր ինչ պարտ էր մոռնալ: Արքունեաց հաճ. յը, բարձր դասու տիկնանց շնորհք, մտաւարական անկախութիւնը չ'կրցան իւր յիշողութենէն վանել խեղճ Գալապուուհւոյն պատկերն որ, որ զիշեր ցերեկ անդադար իւր աչաց տուեալ էր: Ար չարչարուէր երբ անքուն էր, իսկ երբ ի քուն՝ նովաւ կը տոչորէր: Իւր եղբորն ուղղած նամակներն օր ըստ օրէ, տխուր, դառն, եւ յուսահատական էին: Նորայրն ալ մտատանջ, ելաւ գնաց յարքունիս: Ար կարծէր թէ թագուհւոյ մը սիրահարեալ էր, որոյ ձեռքը չէր կրնար խնդրել: Շատ ծիծաղեցաւ երբ իմացաւ թէ այս սիրոյ սուարկայն թշուառ Գալապուուհի մ'էր:

— Իսկեթ ես, Անթօնիէլլօ, ըսաւ անոր: Այդ աղջիկը քու հպատակդ, ծառայդ, գերիդ է, այդ մանկամարդուհին քու ստացուածքդ է:

— Բայց, ըսաւ Անթօնիէլլօ, երգում ըրի իւր հօր:

— Ի՞նչ երգուար, յիմար:

— Երգում ըրի որ ալ չ'ջանամ տեսնել զիւր դուստր:

— Շատ լաւ, պէտք է խոտուով կատարես: Աղնուական մը պէտք է խօսքը յարդէ:

— Ար տեսնես ուրեմն որ ամեն ինչ կորուսած է ինձ համար:

—Երբեք ում չ'ընդր որ չ'ընտանս զինքը տեսնել:

—Այո:

—Բայց եթէ ի՞նք դայ քեզ գտնէ:

—Ինքը:

—Այո, ինքը:

—Ո՞ւր:

—Ուր որ կ'ուզես: Զոր, օրինակ հոս:

—Ոհ, ո՛չ, հոս ոչ:

—Էհ, ուրեմն Ռօզառնօյի դղեակդ:

—Բայց կապուած եմ աստ. չ'եմ կարող Նարօյիէն հեռանալ:

—Միայն ո՞ւր աւուր համար:

—Մհ, ուր աւուր համար կարելի է. պատճառ մը կը գտնեմ ուր աւուր չափ իրմէ հեռանալու: «Չ'զիտեմ որո՞ւ վրայ կը խօսէր, տիկին, ոչ ալ թէ ինչ բան զինքը կը գերէր: Բայց ահա իւր ըսած խօսքը:

—Ես դիտեմ, ըսաւ խնամապետուհին, չափազանց դժգոհեցաւ: Շարունակեցէք, պարոն, շարունակեցէք:

—Արդ, յարեց Ռէյմոն, նամակս առնելուդ՝ պիտի չուես:

—Իսկոյն:

—Լաւ:

Երկու եղբայրք սեղմելով միմեանց ձեռքն, բաժուեցան: Կոմսն Անթօնիէլլօ մնաց ի Նարօյի եւ Ռէյմոն լը Պադաու չուեց ի Գալապոս:

Ամիս մ'ետք, Կոմսն Անթօնիէլլօ եղբորմէն նամակ մ'ստացաւ, եւ ճշմարիտն ըսելով իւր խոստման հաւատարիմ մարդ մ'է Կոմսն: Նոյն օրը մեկնեցաւ:

Ահա եղելութիւնը, համբերեցէք, տիկին, հանգուցին կը մօտինք:

—Այն համբերեմ, մտիկ կ'ընեմ, պատասխանեց խնամապետուհին, միայն թէ կը դողամ:

—Աղբիւրին մօտ մարդ մը սպաննուած էր: Նոյն պահուն հայրս որսէ կը դառնար. դժբաղդն իր հողին կ'աւանդէր. փութաց անոր օգնութեան, եւ մինչ վայրապար կը ջանար ի կեանս դարձնել զայն, Ռէյմոն լը Պադաուի երկու սպասաւորք անտառէն ելնելով ձերբակալեցին հայրս իւրեւ ոճրագործ:

Տարօրինակ դժբաղդութիւն մը, հօրս հրացանը պարպուած էր, եւ աղետալի դուգաղիպութեամբ մ'որոյ սակայն գաղտնիքը

կրնար յայտնել Ռէյմոն՝ եթէ ողջ ըլլար, դիակին կուրծքէն հանուած դնտակն հօրս ունեցածին չափ էր:

Դատաւճիռն համառօտ եղաւ, երկու սպասաւորք այնպէս իմն կը վկայէին որ դատաւորք չ'էին կարող տարակուսիլ: Հայրս մահուան դատապարտուեցաւ:

Մայրս ու քոյրս այս կրկին աղէտքը, դատաւարանն ու վճիռը միանգամայն լսեցին: Մօնթէ - Լիօնէէն մեկնելով դարձան ի Ռօզառնօ այն օրն իսկ յորում Կոմսն Անթօնիէլլօ իւր եղբոր նամակն առնելով՝ Նարօյի կը ժամանէր:

Կոմսն Գարաշիօլօ, իրրեւ տէր Ռօզառնօյի, իրաւունք ունէր դատապարտելու Կամփրիկելու: Կրնար, մէկ նշանով, հօրս կեանք տալ Կամ մահ:

Կոմսին վերադարձին անտեղեակ էր մայրըս. Ռէյմոն լը Պադաուին հանդիպեցաւ որ աւետեց այս լուր, եւ խորհուրդ տուաւ իր աղջկան հետ գնալ մեր հօր ու իւր ամուսնոյն փրկութիւնը խնդրել. կորուսելու ժամանակ չ'կար, հօրս գլխատուամը յաջորդ օրուան որոշուած էր:

Բարեկամական խորհուրդ մը կարծեց եւ փութաց անոր հետեւել. դնաց առաւ աղջիկն եւ տարաւ հետն առանց իսկ ըսելու թէ ուր կը տանէր, եւ, ազնուական պարօնին ժամանած օրն, արտասուաթոր երկու կանայք եկին զարնել իւր դղեկին դուռը:

Խեղճ մայրս չ'էր գիտեր Կոմսին սէրն առ Գօսթանցա:

Դուռը բացուեցաւ, ինչպէս յայտ է, զի ամեն ինչ պատրաստ էր վատ Ռէյմոնի խորհրդով, որպէս զի իւր ծրագրին գործադրութիւնն արգելքի չ'հանդիպի: Բայց երբ ներս մտան սպասաւորք, արգիլեցին զիրենք ըսելով թէ մէկը միայն կրնար մտնել:

Գօսթանցա սպասեց եւ մայրս մտաւ Անթօնիէլլօյի մօտ, որ խիստ ընդունելութիւն մ'ըրաւ նմա. աղաչեց, պաղտեց, Անթօնիէլլօ անողոք կը մնար. ոճիր մ'էր գործուած, կ'ըսէր, իւր ամուսինն էր յանցապարտ, սէտք էր որ այս սպանման վրէժը լուծուէր, պէտք էր որ արդարութիւնը տեղը գար. արիւնն արիւն կը խնդրէր:

Խեղճ մայրս Կոմսին սենեկէն ելաւ, վըլտահար, յուսաբեկ եւ Աստուծոյ օգնութիւնը հայցելով:

— Բայց նոյն միջոցին դուք ո՞ւր էիք, հարցուց խնամապետուհին :

— Գալապոսի միւս ծայրը, տիկին, ի Տարէնտէ, ի Քրինտիդի, ի՞նչ դիտեմ: Աղէքուծեան տեղեակ ըլլալէ շատ հեռի էի: Ահա այդչափ:

Մայրս, կ'ըսէի, դուրս ելաւ յուստհատ, եւ ուզեց առնել տանիլ աղջիկը, բայց Գոսթանցա կեցուց զայն:

— Մայր իմ, ըսաւ, ես ալ փորձեմ զիջուցանել մեր Տէրը: Կարելի է քան զձեզ երջանիկ կ'ըլլամ:

Մայրս օրեց գլուխը եւ աթոռի մը վրայ ինկաւ. բնաւ յոյս չ'ունէր:

Քոյրս ներս մտաւ:

— Գիտէ՛ր թէ այդ մարդը զինք կը սիրէր, դոչեց դքսուհին, եւ անոր սենեակը կը մանէ՛ր:

— Հայրս պիտի մեռնէր, տիկին, կը հասկընա՞ք:

Իզապէլ տ'Առաիօն ակռաները կրճտեց, եւ վայրկեան մ'ետք՝

— Շարունակեցէք, շարունակեցէք, ըսաւ:

Տասն վայրկեան անցաւ մահատիպ անձկութեան մէջ, ապա ծառայ մը ելնելով թուղթ մ'ի ձեռին,

— Պարոն կոմսն կատարեալ աղատութիւն կը շնորհէ յանցաւորին, ըսաւ, ահա մագաղաթն իւր կնիքով վաւերացեալ:

Մայրս սրտայոյզ ճիշ մ'արձակեց, որ յուսահատութեան ճիշ մ'էր կարծես:

— Ո՛հ, շնորհակալ եմ, շնորհակալ, ըսաւ, եւ կոմսին ստորագրութիւնը համբուրելով խոյացաւ դէպի դուռը: Յետոյ, իսկոյն կենալով, իսկ աղջիկս . . . ըսաւ:

— Ի բանտ վազեցէք, ըսաւ ծառայն, ի դարձին աղջկնիկդ տունը պիտի գտնէք:

Մայրս սրացաւ, ուրախութենէն խելայեղ, երջանկութենէն արբիւ, Ռոզմանոյի փողոցներէն անցնելով կը գոչէր.

— Աղատուած է, աղատեցաւ, ահա իւր աղատագիրն:

Բանտին դուռն հասաւ ուր արդէն երկիցս ներկայացեր բայց մերժուեր էր: Սրբորդ անգամ մերժել ուզեցին բայց թուղթը ցուցուց, եւ դուռը բացուեցաւ:

Զինքը հօրս բանտը տարին:

Հայրս դահճին կը սպասէր, բայց փոխան մահու կեանք կը մանէր:

Այդ վշտարանին մէջ պահիկ մ'անձառ ուրախութիւն մը տիրեց:

Յետոյ, հայրս տեղեկութիւն հարցուց, թէ ի՞նչպէս մայրս ու՞ր քոյրս խմացեր էին իւր վրայ ծանրացող ամբաստանութիւնը, ի՞նչպէս հասեր էին առ կոմսն, ի վերջոյ ի՞նչպէս ամեն ինչ կատարուեր էր:

Մայրս սկսաւ պատմութիւնն, հայրս ունկնդրեց, զայն մերթ ընդ մերթ ընդհատելով իւր բացադանջութեամբ. քիչքիչ քանի մը բառ միայն ըսաւ, այն ալ դողդոջուն ձայնիւ, իսկոյն բոլորովին լռեց, յետոյ գլուխն ինկաւ երկու ձեռացը մէջ, յետոյ անձկութեան քրտունք երեւցան զիմացը վրայ, վերջը ամաթոյ կարմրութիւնը փայլեցաւ ձակաթին վրայ. ուր ուրեմն, երբ մայրս ըսաւ թէ կոմսէն մերժուելով թողած էր որ քոյրս ալ մտնէ, հայրս, իբրեւ դառիւծ վիրաւոր, մենչիւն մ'արձակելով խոյացաւ եւ վազեց ի դուռն. դուռը գոյ էր:

Իբրեւ բարձ գործածած քարն առաւ եւ բոլոր ուժովը երկաթեայ վանդակորմին նետեց զոր կը կարծէր թէ բանալ տալու կրաւունք ունէր:

(Շարունակել է)

Ա Ձ Դ

Մեր Գաւառացի Պատ. բաժանորդաց ուշադրութիւնը կը հրաւիրենք հետեւեալ երկու կէտերուն վրայ.

Ա. — Թէ գաւառաց համար Մասն վեցամսեայ բաժանորդագրութիւն չունի:

Բ. — Թէ թղթատարութեան ծախիւք տարեկան բաժանորդագրինն է 69 դր:

Հետեւաբար վեցամսեայ բաժանորդագրին եւ կամ տարեկան 69 դրէն նուազ զըրկողները բացարձակապէս թերթ չպիտի ըստանան:

Ք Ա Ղ Ո Ւ Ա Տ

ՀԱՔԱԹԱԿԱՆ ԱՐՈՅ

27 ՅՈՒԼԻՍ-2 ՕԳՈՍՏՈՍ 1885

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Ռուս լրագրաց մեծագոյն մասը կը յայտարարէ թէ աֆղանեան խնդրոյ մասին Լորտ Սահլալըրի խաղաղասէր յայտարարութիւնը վատհաճութիւն չեն ներշնչեր, և թէ ընդհակառակն, Անգլիոյ կողմէ պինդորական պատրաստութեանց մեծագոյն փութաջանութեամբ յառաջ տարուիլը ծանր կասկած կը պատճառէ թէ Լորտ Սահլալըրի կը խորհի Ռուսիոյ հետ պատերազմի բռնութիւն:

—Անգլ. սպայք Հերադի մէջ կը գործեն շարունակ, ուր ժողովրդեան կողմէ լաւ ընդունելութիւն կը գտնեն, և ամբողջեանց վերանորոգումը փութոյ պնդութեամբ յառաջ կը տանին: Էսիր Ալտ-իւր-Բահման խան նոր ոյժեր կը կազմակերպէ պատերազմ ծագելուն Հերադ գրկելու համար: Իւր որդին պատուակալ հրամանատար պլտի լինի Հերադի բանակին:

—Մէրվի թիւրքմէն ցեղերուն մէջ սառտիկ յուզում մը կը տիրէ եղեր, որովհետեւ ռուս սպայներ թիւրքմէն կանանց պատիւը բռնաբարեր են քանիցս:

—Անգլ. կառավարութիւնն հրատարակեց Եգիպտոսի նոր փոխառութեան նկատմամբ տարւոյս փետր. ամսէն իվեր փոխանակեալ թղթակցութիւններն, որոցմէ կ'երեւի, ի մէջ այլոց, թէ Բ. Պուռը խնդրեր է Օսմաներկայացուցիչ մը անուանել Եգիպտոսի ընդհանուր Պարտուց Անտուկին Եւրոպական Յանձնախմբին, բայց Լորտ Կրանվիլ չէ համաձայնեց այս մասին:

—Տըք. Ալլար, բժիշկ Ափրիկեան Միջագային Ընկերակցութեան (որՔոնկոյի կառավարող պետութիւնն է այժմ), երեք տարի Քոնկոյի մէջ բնակելէ յետոյ Պրուսիէ վերադառնալով, յայտարարած է թէ Քոնկոյի բնիկներն ուրախութեան ցոյցերով ընդունեցին Քոնկոյի երկրին վրայ եւրոպական վեհապետութեան հաստատման լուրը: Տըք. Ալլար կը հերքէ այն կարծիք թէ Քոնկո-

յառնալ Եւրոպացիներէն շատեր կը մեռնին եղեր կլիմային չհանդուրժելով:

—Կրանդ գորավարին ի պատիւ՝ հոգեհանգստեան յատուկ պաշտօն մը կատարեցաւ ի Լոնտոն Ուէսթմինսթերի Մայր-Եկեղեցւոյն մէջ, ուր ներկայացեալ էին արքայական ընտանիքն, և ներկայ էին բազմաթիւ նախարարք, քաղաքագէտք, գորավարք, Լոնտոնի երեւելիք և Ամերիկացիք:

—Եւրոպական մայրաքաղաքաց, մանաւանդ Բարիլի մէջ, բաւական սրտեղութիւն պատճառեց Պիզմարք իշխանին կէս-պաշտօնական երկու թերթերուն վերջին յօդուածներն, որք Յրանսայի դէմ ուղղեալ են: Նորք Տայէ և Քեօնէշէ Չայիւանի կը տարտաւեն Յրանսացւոց Քերմանիսէն յիշէ լուծելու գաղափարն, որ հոգ կը պատճառէ եղեր Քերմանիսէրուն, և կը գաղափարեն Յրանսացւոց խորհուրդներն՝ իրենց ղինուորական ոյժերն աւելցընելու մասին, և կը գանգատին որ Յրանսա կարեւորութիւն չի տար խաղաղութիւն պահպանելու Քերմանիսէ հետ: Պիզմարք իշխանին սովորական յանդիմանութիւնն է այս առ Յրանսասիս:

—Ափրիկեան Տրիպոլիէ կը հեռագրուի Լոնտոն թէ օտմ իշխանութիւնը անդադար կ'աշխատին ամրացնել Տրիպոլսոյ եղերքներն, ուր ծովառմբեր հաստատած են վերջին օրերս:

—Անգլ. մամուլը զայրացած է ռուս կառավարութեան ընթացքին դէմ, որ նորէն երկու ամիս յետոճգած է աֆղանեան խնդրոյն լուծումը: Թայմս հանդիսապէս կը յայտարարէ թէ այս վիճակ վտանգաւոր է խաղաղութեան, և խորհուրդ կուտայ նախարարութեան այլ ևս զիջումներ չընելու, և Աֆղանաց էմիրին՝ շարունակելու իւր պատերազմական պատրաստութիւններ:

—Հնդկաստանի լրագիրք ոմանք կը ծանուցանեն թէ Եագուպ Ալիին՝ Քեաշղարի նախկին իշխանին որդին՝ վերստին տիրացած է Քեաշղարի, վանելով Չինացիներն, օգնութեամբ Ռուսիոյ:

—Տէրութիւնը արդէն ծանուցագրեր փոխանակեր են Պուլղարիոյ տարեկան հարկն որոշելու համար, և կը կրկնուի այն լուր թէ ի մօտոյ սոյն նպատակաւ Գեսպանախորհուրդ մը պիտի գումարի Կ. Պոլսոյ մէջ:

—Գահիրէէ կը ծանուցուի թէ խնայութիւն ընելու համար, եգիպտական նախարարութիւնն ի մօտոյ չորս անգամի պիտի վերածուի : Ասոնք պիտի լինին . Նուպար փաշա նախարարնուպետ, դատական նախարար և արտաքին գործոց նախարար : Այտիւլ-Գատրի փաշա, պատերազմական և ներքին գործոց նախարար : Մուսթաֆա Ֆէհմի փաշա, ելմտական նախարար, և Ապտիւր-Ռահման փաշա, հանրային շինութեանց և կրթութեան նախարար :

—Մէհտիին մահէն անմիջապէս յետոյ, իւր յաջորդ Էմիր Ապտ-Ուլլահ՝ Մէհտիական բանակին հրամայող Էմիրները կանչեր է ի Խարդուս խորհուրդ մը կազմելու, յորում պիտի որոշուի թէ Անգլիացոց և Եգիպտացոց դէմ պատերազմը պէտք է շարունակել թէ ոչ : Էմիր Ապտ-Ուլլահ ծանուցեր է թէ Մէհտին 20 միլիոն դահեկան թողած է «Սուրբ պատերազմին» շարունակման համար : Էմիրն ինք փափաքող է եղեր գինադադարի մը կնքման, բայց կ'ուզէ միւս Էմիրներուն կարծիքն առնուլ նախապէս :

Ն Ե Ր Ք Ի Ն

Անգլիական արտասովոր դեսպան Սըր Հուայդ շարթուս սկիզբը պատիւ ունեցաւ Վեհ. Սուլթանին ներկայանալու, որ առաջին անգամ լինելով մասնաւոր ունկնդրութիւն մը ընդհած էր նմա :

Ինսպանն յոյժ սիրալիր ընդունելութիւն գտաւ եւ այդ տեսակցութեան միջոցին Վեհ. Սուլթանի միտքը պատրաստեց Սըր Տրըմընտ Ուոլֆի պաշտօնին նկատմամբ :

Անգլիական արտասովոր պատուիրակը ճանաչեալ ելած է արդէն մայրաքաղաքս դալու համար, ուստից Եգիպտոս պիտի երթայ :

—Ինչպե՞ս յարգմանութեան դիւանի գլխաւոր պաշտօնատարներէն Մէհմետ պէյ՝ արտաքին գործոց նախարարութեան թարգմանութեան առաջին գրասենեկի տնօրէն անուանեցաւ Ահմետ Աիա պէյի տեղ որ Պուքրէի Օսմ. դեսպան անուանած է :

—Կ. Պոլսոյ Խալակական դեսպան Քորթի կոմսն՝ որ Քարլսպատի քերմուկները կը գտնուէր, իւր կառավարութենէն ստացած

հրահանգին համաձայն, ճանաչեալ ելած է մայրաքաղաքս զալու համար :

—Նախարարաց Խորհրդն որոշեց որ առեւտրական եւ երկրագործական նախարարութեան կողմէ խնդրուած 5000 ոսկոյ վարկը տրուի, որթալուիճի դէմ ձեռք առնուելիք միջոցներուն ծախսուելու համար :

—Մէրսինի եւ Ատանայի միջեւ սղլուած երկաթուղւոյ շինութիւնն ամենայն փութով յառաջ կը տարուի : Կըսուի թէ ցարդ շինուած ուղւոյն երկայնութիւնն 5 հազարամետրն անցած է :

—Քաղաքապետական պաշտօնատան մէջ Յանձնախումբ մը կազմուեցաւ որ պիտի սլատրաստէ կառավարական բոլոր պաշտօնէից նոր եւ կատարեալ վիճակալիրն, հանդերձ կենսագրական ծանօթութեամբ :

—Միսախատի Րէժիի ընկերութիւնն հրատարակեց իւր հաստատութեան առաջին տարւոյ տասնեւմէկ ամսոց հաշուեկշիռն (դ28 փետր. 1883) ուստից կերելի թէ 18,665,595 շրուշ Օկ փարայի բաց մ'ունի :

Րէժիի նորընտիր տնօրէն Պ. Ֆանը Օպուտնօ իւր պաշտօնի գլուխն անցաւ շաբթուս մէջ : Հրաժարեալ տնօրէն Պ. Լէնկ մեկնեցաւ մայրաքաղաքէս :

—Ուուսլոյ Վեհ. Կայսրը պարսկական բանի մը ծանրագին գորդեր նուէր զրկած է Վեհ. Սուլթանին :

—Արտաքին գործոց նախարարի խորհրդականի նախորդ օգնական Չայեան Իլիա էֆէնտիի ծանուցեալ դատին վերաքըննութիւնը տեղի պիտի ունենայ այս օրերս Պետական Խորհրդոյ առջեւ :

—Ոստիկանական ելմտացոյցի բարեփոխութեան համար կազմեալ Յանձնաժողովն՝ ի մէջ այլոց որոշեց, թէ մայրաքաղաքիս և թէ՛ գաւառաց մէջ, Ա. կարգի ոստիկանաց 1,000, Բ. կարգի՝ 750, Գ. կարգի՝ 500 եւ պարզ ոստիկանաց 500 ական զրուշ ամսաթոշակ սահմանել :

Ա Ջ Դ Ա Յ Ի Ն

Բերկրութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ շնորհել Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հօր Պէրաթին որ հինգշաբթի առաւօտ Ն. Սրբազ.

նութեան յանձնուեցաւ յատուկ պաշտօնէից ձեռամբ :

Այս պէրաթ ըստ ամենայնի յար եւ նըման է նախորդ պատրիարքաց պէրաթներուն :

— Երուսաղեմայ Պատուց Բարձման Նորակազմ Յանձնաժողովն առաջին նիստն ընելով շաբթուս մէջ, իւր Դիւանը կազմեց հետեւեալ կերպով :

Առնապէս Նուբեան Յովհաննէս էֆ.

Առնապէս Մէրէճմյուզի Յարութիւն էֆ.

Գանձապէս Մաքսուտ Սեպուհ էֆ.

Յանձնաժողովն զբաղեցաւ ապա Պոլսոյ թաղերէն առնուելիք տրոց քանակութեան որոշմամբ, որոյ համար հարկ եղած չըմբերականք պիտի զրկուին Թաղական Խորհրդոց :

— Ամեն. Խորիւեան Սրբազան՝ ընկերակցութեամբ Պատրիարքարանի գործակատար Ֆրէնկեան Աբրահամ էֆէնտիի, երկու օր առաջ Բ. Գուռն երթալով տեսակցեցաւ նախարարաց ունանց հետ :

— Կրօնական Ժողովոյ վերջին նստի որոշմամբ, Ս. Պատրիարք Հայրն հեռագրեց ի Տիգրանակերտ առ Գեր. Մկրտիչ Եպիսկ. Տիգրանեան որ վաղընդ փոյթ վերադառնայ Մակարայեցւոց վանքն եւ իւր պաշտօնին ձեռնարկելով, Վանուց գործերը կարգադրէ եւ թեմական ժողովրդոց տեղական ազգային գործերը տնօրինէ :

Յանձնարարուեցաւ միանգամայն որ Մկրտիչ Եպիսկ. փութայ հեռագրել ի Պատրիարքարան իւր մեկնումն ի Տիգրանակերտէ :

— Սպայակոյտի անդամ Վսեմ. Նէճիպ փաշա շաբթուս մէջ այցելութիւն տուաւ Ս. Պատրիարք Հօր որոյ հետ վաղեմի ծանոթութիւն ունի այն թուականէն յորում Ն. Սրբազնութիւն առաջնորդ էր Կարնոյ եւ ինք՝ Նէճիպ փաշա՝ Կարնոյ ամբուստեանց հրամանատար էր :

— Իզմիրէն կը գրեն թէ հեռագրոյ մը ի պատասխան, Գեր. Սուքիաս Եպիսկ. Պարզեանց հեռագրեր է առ Ամեն. Մելքիսեդէկ Սրբազան թէ, իւր թէ Ն. Ամենապատուութեան դէմ իւր կողմէ ուսն կառավարութեան գիր մը ներկայացուած լինելուն նկատմամբ լրագրական հրատարակութիւնը անհիմն են :

— Մեծանուն նկարիչ Պ. Այվազովսկիի կողմէ ժամանակաւ Միացեալ ընկերութեանց նուիրեալ ծովանկար մը վիճակահանութեան զրուած է, հազար տոմսակի վրայ, մէն մի տոմսի գինը մէկ մէճիտէն :

Հնկերութեան Տնօրէն Ժողովոյ խնդրանք, Ազն. Տիկին Սրբուհի Տիւսար՝ ընկերակցութեամբ Թորոսեան Յովհաննէս էֆէնտիի՝ անցեալ շաբթու իւր բարեկամներէն երեսնի չափ անձանց գլխելով, յաջողեցաւ սպասել հազար տոմսակաց կէսէն աւելին :

— Ազգ. Ժողովն երէկ առաւօտ ի նիստ գումարեցաւ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ ատենապետութեամբ Տիգրան էֆ. Եւսուֆեանի :

Նախագահ Սրբազանը ժողովոյն հաղորդելէ յետոյ թէ իւր Պատրիարքական Պէրաթն ընդունած է, ինչպէս նաեւ Տրապիզունի առաջնորդին Պէրաթն հասած է ի Պատրիարքարան, որք յար եւ նման են նախորդ Պէրաթնիս, բարեմաղթութիւններ ըրաւ փան կենաց վեհ. Սուլթանին եւ իւր նախարարոց :

Ապա, Ժողովն անցաւ ատենական գործողութեանց :

Դիւանը ժողովոյն ներկայեց Երուսաղեմայ վանուց 1884-85 երկու տարւոյ հաշուեցոյցն եւ 1885-86 տարւոյ երկու տարեալ երկու տարեցոյցն, որք համարակալութեան դիւանին յղուեցան ի քննութիւն :

Յետոյ, Ժողովն զբաղեցաւ Կրօնական Ժողովոյ համարատուութեամբ :

— Զրոյց կայ թէ Պատրիարքական Փոխանորդ Գեր. Տ. Գէորգ Մ. Վ. Ռուս. ճուղլեան հրաժարեր է պաշտօնէն :

Ըստ մեր տեղեկութեան, Ն. Գերապատուութիւն արքարեւ հանգստեան պէտք ունենալն յայտնած է, բայց պաշտօնական հրաժարագիր մատուցած չէ եւ յուսալի է որ չի մատուցաներ :

ԺԱՄԱԳՈՐԾ Գ. Է. ՍԵԼՎԱՃԵԱՆ

244 — ՄԱՀՄՈՒՏ ՓԱՇԱ ԳԼՈՒԽ — 244



30
ՅՐՆՔ 124
ՂՂՐՇ

Ֆրանսայի ամենէ համ-
բաւաւոր գործարաններէ
միոյն մէջ խիստ խնամք
պատրաստել տուած է Նշա-
նակեալ գնով նմանը ցարդ
չտեսնուած 15 սանդխտեղ
երկայնութեամբ խիստ ձե-
ւաւոր, զարնող, շարաթը
մի անգամ յարուող, պատի
ժամացոյցներ: որը ընդու-
նելութեան սրահներու, սե-
նեկաց, վարժարանաց եւ
գրասենեկաց վայելուչ եւ
յարմարագոյն եւ, և որոց
երկար տարիներ ամենա-
նկատմանութեամբ բանին
կ'երաշխաւորէ:

Յեշտալ վաճառատան
մէջ կը գտնուին նաեւ խիստ
արժանի գնացքով լաւ բանող
ընտիր ժամացոյցներ:

Գաւառներէ ելած յանձ-
նարարութիւնէ թուով եւ
ճշգրտութեամբ կը կատար-
ուին:

ՕԳՏԱԿԱՐ ՇՐՈՏԱՐՈՎԱԿԱԹԻԼՆ
ՀԻԻԱՆԴԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ
Ի

ՏՕԳԹ. Ս. Յ. ՅԱԿՈԲԵԱՆԷ


Սոյն գործոյն մէջ որ առաւել քան 400
էջերէ բաղկացեալ է, հեղինակն ամփոփած
է այն ամեն ծանօթութիւններ, հրա-
հանդներ ու պատուէրներ որք հար-
կուոր են հիւանդաց պէտք եղած ընտա-
նեկան խնամքները տալու, բժշկական
զանազան դեղորայքն պատշաճապէս գոր-
ծածելու և մանաւանդ յանկարծական պա-
տահարաց միջոցին հարկ եղած անմիջական
գարմանները տանելու: Սոյն պ'սրունակու-
թեամբ մեծ ծառայութիւն մը մատուցած է
կոչուած է սա հայ ընտանեաց մէջ որոց
բազումը զուրկ լինելով այսպիսի առաջնոր-
դէ մը, կը գործեն յաճախ թերութիւններ
և սխալներ որք յետոյ մեծ աղետից պատ-
ճառ կը լինին:

Կեդրոնատեղին է Արամեան գրատունը
և կը ծախուի բոլոր հայ գրաւաճառաց և
Պ. Վայրի քով իւրերա:

Գին 1 մէճիտ

ԼՈՅԹԸՆ ԵՒ ՉԻՍՆԷԼ ՄԹԵՐԱՆՈՑ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԵԱՑ

ԳԻԻՐՔՃԻ ԳԱՅՈՒՍԸ; ՂԱԼԱԹԻԱ



«ՐԻԱՆ Մականուանեալ հնձող մեքե-
նայն երկու ձիով կը քաշուի և կը կշռէ
500 օխա:

ԳԻՆ՝ 35 ՕՍՄ. ՈՍԿԻ Է

Մեքենային կատարելագործութիւնը եւ
երաշխաւորեալ է: Գնողըն երբ գոհ չիլինի,
կրնայ ետ առնուլ իւր ստակն:

502

ՄԻՋԱՏԱՍՊԱՆ ՃՇՄԱՐԻՏ ՓՈՇԻ

ԾԻՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Ա. ՄԻԹԱԼՈՎ ԻԶԻ

Ի ՍԹՈԼԻՎՈ, ԴԱԼՄԱՏԻԱ

Ղալաթիոյ մէջ Մթերանոցն է

Մոմհանէ, Լոյտ խան, 2.

ՍՈՒՎԸՆԻՌ ՏԻԻ ՊՈՍՖՈՐ

(ՅԻՇԱՏԱԿ ՎՈՍՓՈՐԻ)

Սոյն բոլքան, հեղինակութիւն Յ. Ասա-
տուր էֆէնտիի, թէեւ նոր հրատարակուած,
սկսած է սակայն մեծ ընդունելութիւն գըտ-
նել երաժշտասէր անձանց կողմէ: Կը ծախ-
ուի Սոնտալճեան էֆէնտիի վաճառատունն,
Ղալաթիա. Թիւնէլին քով, ի գին 10 ղրուշ

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՅ

ԵՐԿՐՈՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Թարգմանիչ

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Հրատարակիչ

Ն. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ Ս. ՏԵՕՎԼԵԹԻԱՆ

Երրորդ հատորն՝ որ 72 մեծ և փոքր պատկերներով զարդարեալ է և 408 երեսէ կը բաղկանայ, աւարտած լինելով՝ կը վաճառուի ի գին 50 դրուշ :

Զորրորդ հատորին բաժանորդագրութեան գինն է կանխիկ 25 դրուշ :

16 երեսէ բաղկացեալ մէկ մի թերթն 50 փարայ :

Գաւառաց համար թղթատարութեան ծախքը միատեղ հաշուելով մէկ հատորին գինն է 50 դրուշ :

ԲԱՐՍԵՂ ԵՒ ԷՔՍԵՐՃԵԱՆ

ՏԱՐԵՐՔ

Մ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Ձ Ո Ւ Ի

Սիրուն, ճիւղ և նոր 110 պատկերօք և 26 ընտիր գրչագիր օրինակօք և Պատփորի աշխարհացոյցով,

Ուր աշակերտը պիտի ուսանի հիմնականապէս կարգաւ, գրել, խորհիլ, խօսիլ և պիտի տեղեկանայ հաւատոյ և բարոյականի, երկրաչափութեան, կենդանաբանութեան, առողջաբանութեան, բնագիտութեան, բուսաբանութեան, աշխարհագրութեան, մարդակազմութեան, հանքաբանութեան, գծագրութեան և քերականութեան նախնական գիտելեաց :

Կը գտնուի ամէն հայ գրավաճառաց քով և գլխաւորաբար Սուճի Պօղոս աղայի խանութք :

Կեդրոնատեղին է Յ. Գալաֆեան էֆ.ի գրատունը : Վաճառելի՝ առանց նօթայի 4 զրշ. և նօթայով 5 զրշ :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՆՈՐԱՎԷՊ

ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼԸ . — ԵՐԱՋԻ ՄԸ ԳԻՆԸ . —

ԿԱՏԱԿ ՄԸ .

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Գին 5 Ղրուշ

Կը ծախուի

ՊՂՂՍ, հայ գրավաճառաց քով և ջրավաճառ Պօղոս և Յակոբ աղայներու խանութները :

ՂԱԼԱԹԻԱ, Յ. Արշակ և Ե. Վրոյր էֆէնտիներու թղթավաճառատուններն և Արեւելի գրասենեակը :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գուրպան Յովսէփ էֆէնտի հեղինակութեամբ հայատառ և թրքաբարբառ վիպասանութիւն մը կը հրատարակի տետր առ տետր :

Այս նոր վիպասանութեան անունն է «Հէփէյէի էֆէ եօլաշար, եփօր հաքֆ ապալէնէն շահէնէ, այսինքն Պատմութիւն երկու ուղեկցաց, կամ ճշմարտութեան և արդարութեան յայտնութիւնը» :

Գուրպան Յ. էֆէնտի իւր վէպին նիւթը քաղած է Պօղոս ներքին կեանքէ : Մինչեւ 10րդ տետրն հրատարակուած է և կանոնաւորապէս պիտի հրատարակուին միւսներն ալ :

Յրտօնատէր

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻ ԼՐԱԳՐՈՅ